ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 41 (417)
www.syuniacyerkir.am

Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջքների մեջ եւ նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ...

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով եղել է հարավարեւելյան սահմանագոտում

ՀՀ նախագահ, Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը դեկտեմբերի 8-ին աշխատանքային այցով եղել է Հայաստանի Հանրապետության հարավարեւելյան զորամասերից մեկում:

Նախագահը ՀՀ պաշտպանության նախարարի եւ ՀՀ զինված ուժերի բարձրաստիճան հրամկազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ զորամասի մշտական տեղակայման վայրում ծանոթացել է զորամասի մարտական պատրաստականությանը, լսել հրամանատարության զեկույցը, շփվել զինվորների հետ, որից հետո շրջայց է կատարել շահագործման հանձնված նորակառույց զինավանում, ծանոթացել ստեղծված պայմաններին եւ զինվորական ճաշարանում ճաշել զինվորների հետ:

Նախագահ Սերժ Սարգսյանը խրախուսել է ծառայության ընթացքում աչքի ընկած մի շարք զինծառայողների:

president.am

Կնքվեց երկկողմ համաձայնագիր

2017թ. դեկտեմբերի 15-ին Կապան համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանը եւ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովը կնքեցին սոցիալ-տնտեսական համագործակցության մասին համաձայնագիր:

2017թ. Կապանի ԼՀԿ-ն քաղաքում կիրականացնի 11 ծրագիր, որոնց ընդհանուր արժեքը 115,1 մլն դրամ է: Միջոցառումները վերաբերում են կրթական, մարզական, բնապահպանական, սոցիալական ոլորտներին:

– Առաջադրված ծրագրերից առաջնահերթ են համարվում նրանք, որոնք համահունչ են ընկերության վարած քաղաքականությանը: Միաժամանակ ընկերության եւ համայնքի կողմից ստեղծվելու է հանձնախումբ, որն իրակա-

նացվող աշխատանքները մշտադիտարկում կանցկացնի, – համաձայնագրի կնքումից հետո ասաց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը՝ հավելելով, որ ընկերության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ բոլոր ծրագրերն ընթացիկ քննարկումներ կունենան, իսկ ավարտից հետո կամփոփվեն արդյունքները, ինչպես նաեւ քաղաքապետն ու ընկերության գլխավոր տնօրենը եռամսյակը մեկ կներկայացնեն կատարված աշխատանքների ընթացքը եւ անելիքները: Քաղաքապետը նաեւ հայտնեց, որ յուրաքանչյուր ծրագրի կատարման ընթացքում խնայված միջոցները երկկողմ համաձայնությամբ ուղղվելու են նույն բնույթի ծրագրի իրականացման, ինչի մասին կհայտնվի լրացուցիչ:

– Համաձայնագիրը ստեղծվել է՝ Կապանի համայնքի ղեկավարության հետ համատեղ, հաշվի առնելով համայնքում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակը, ընտրվել են ավելի հրատապ լուծում պահանջող ուղղությունները՝ իրականացված ուսումնասիրությունների հիման վրա: Կարծում եմ՝ այդ առաջնահերթությունները եւս հավանության կարժանանան քաղաքի բնակիչների կողմից: Համաձայնագիրը երկարաժամկետ համագործակցության է միտված, ահա ինչու 2017 թվականը կարեւոր է մեր փոխհամագործակցության համար, – ասաց Դմիտրի Ուշկովը:

Վերջում Ա.Հայրապետյանն ու Դ.Ուշկովը պատասխանեցին լրագրողների հարցերին:

«Սյունյաց երկրի» հարցին, թե կոմբինատը բնապահպանական ինչ միջոցառումներ է պատրաստվում իրականացնել Կապանում, մանավանդ կոմբինատի Գեղանուշի պոչամբարը մոտ է քաղաքին, Դ.Ուշկովը ասաց, որ թեպետ տրված հարցը չի առնչվում խնդրո առարկային՝ համաձայնագրին, իրենք այդ խնդրին մեծ ուշադրություն են դարձրել, վերլուծում են ձեռնարկության արտադրատնտեսական գործունեությունը, պոչամբարի հետ կապված կան բաներ, որոնք մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտություն ունեն:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Տաթեւի վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնման ավարտը՝ հաջորդ տարի

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի շրջանակում վերականգնվում է Տաթեւի Սուրբ Աստվածածին կրկնահարկ եկեղեցին, որ 1087 թվականին կառուցել է Շահանդուխտ թագուհին. նման մի երկհարկ եկեղեցի Շահանդուխտ թագուհին կառուցել էր իր քույր Կատայի հետ Վահանավանքում (1058 թվական): Երկու եկեղեցու դեպքում էլ ենթադրվում է, որ առաջին հարկը եղել է դամբարան, թեեւ հնագետները դրա հաստատումը չեն գտել:

Վանքի ռեստավրացիոն աշխատանքների որակը հսկող Սանահին Մանասյանը երկու մասնագիտություն ունի՝ կոնստրուկտոր եւ վերականգնող, Տաթեւի վանական համալիրում աշխատում է հուլիսից: Վանական համալիրում ռեստավրացիոն աշխատանքները սկսվել են 2010 թվականից եւ շարունակվում են փուլ առ փուլ. վերականգնվել են ձիթհանը, վանական համալիրի հյուսիսային մուտքը, այժմ հիմնանորոգվում է Սուրբ Աստվածածին եկեղեցու գմբեթը: Նա տեղեկացնում է, որ վերացնում են թերությունները գմբեթի եւ թմբուկի նիստերի հետ կապված, որպեսզի եկեղեցին ստանա իր նախաստեղծ տեսքը (պահպանվել է նրա 1891 թվականի լուսանկարը): Ինչեւէ, այժմ վերականգնողական աշխատանքներն իրականացնում է Սիսիանի «Նորոգշին» ԲԲ ընկերությունը (տնօրեն՝ Մարատ Ասլանյան):

Տաթեւի վանական համալիրի բոլոր կառույցները 1931 թվականի ապրիլի 28-ի երկրաշարժից քանդվեցին, որոշները պարզապես վերածվեցին փլատակների: 1968-70-ական

էջ 5

Դ գիտություն բաժանորդների

Ընթանում է «Սյունյաց երկիր» թերթի 2017թ. բաժանորդագրությունը: Տարեկան բաժնեգինը *10,000* դրամ է:

ԴԱՆԻԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ. «Եզակի դեպքեր են եղել, երբ վիրավոր զինվորը փոխվել է մայրաքաղաք»

Ապրիլյան պատերազմի ծանրությունն իրենց ուսերին տարան զինվորական հոսպիտալները, դժվար է գերագնահատել նրանց դերը վիրավոր զինվորներին ընդունելու, ապաքինելու եւ շարք վերադարձնելու կարեւոր գործում: «Սյունյաց երկրի» զրույցը «Զանգեզուրի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկի պետ, վիրաբույժ, բժշկական ծառայության փոխգնդապետ Դանիել Մկրտչյանի հետ է:

– Դեռեւս ապրիլյան պատերազմի օրերին մենք շատ էինք ուզում կապվել Ձեզ հետ, բայց չստացվեց, նաեւ պատկերացնում էինք Ձեր ծանրաբեռնվածությունը: Հեռվից հեռու տեղեկություններ ստացանք, որ այն օրերին շատ լարված էիք աշխատում: Ճիշտ է, ինն ամիս է անցել, բայց մեր հիշողության մեջ տակավին թարմ են ապրիլյան պատերազմի իրադարձությունները, առավել եւս այդ օրերի դասերն էլ հրատապ են ու շարունակում են մնալ այդպիսին: Բայց մեր զրույցը ցանկանում ենք սկսել մի այլ իրողություն մատնանշելով: Հոսպիտալ մտնելիս հաճելի տպավորություն ստացանք: Նախ՝ կարծեք, թե հոսպիտալի մասնաշենքի հիմնանորոգումն ավարտին է մոտենում եւ ակնահաճո տեսք է ստացել: Շա՞տ գործ է դեռեւս մնում անելու:

– Եղանակային պայմանների հետ կապված՝ առաջիկայում չենք հասցնի հիմնանորոգումն ամբողջությամբ ավարտել, բարեկարգման աշխատանքներ են մնացել, ձյունը երեւի կխանգարի: Մասնաշենքի արտաքին տեսքի հետ կապված աշխատանքներն ավարտվել են, ներսի աշխատանքները կավարտենք: Բայց բակի ասֆալտապատումը գարնանը կարվի, նաեւ տարածքի պարսպապատումը:

– Երկրորդ բանը, որ նկատեցինք, մարդաշատ էր հիվանդանոցը. մի կողմից դրական է, որ մարդիկ Ձեզ են դիմում, մյուս կողմից՝ մտածում ես՝ այդ մարդիկ, անկասկած, առողջական խնդիրներ ունեն: Ոչ մի բժշկական կենտրոնի մոտ այսքան ավտոմեքենա եւ այսքան մարդ չես տեսնի:

– Այդքան մարդկանց հոսքը պայմանավորված է այն խնդիրներով եւ պահանջներով, որոնք դրված են հոսպիտալի առջեւ, եւ այդ խնդիրների ու պահանջների շրջանակում սպասարկում ենք: Ասենք, թե չասենք՝ զինվորականացած ազգ ենք դարձել: Հոսպիտալը սպասարկում է զինծառայողներին, նրանց ընտանիքի անդամներին, ազատամարտիկներին, մարտական գործողությունների վետերաններին, այսինքն՝ բավականին կոնտինգենտ ենք սպասարկում, իսկ թե ինչպես ենք սպասարկում, թող իրենք ասեն:

– Եթե գաղտնիք չէ, տարեկան քանի՞ հոգու եք սպասարկում:

– Ստացիոնար՝ մոտ երեք հազար, շուրջ 10-12 հազար հոգու էլ ամբուլատոր կարգով ենք սպասարկում:

– Այս պահին ստացիոնարում քանի՞ հոգի է բուժում ստանում:

– Այս պահին՝ 65 հոգի:

– Վերջին վեց ամսում կադրային ի՞նչ փոփոխություններ են եղել:

– Անընդհատ պրոցես է հոսպիտալը կադրերով համալրելը: Բանակային ծառայությունը ներառում է զորակոչն ու զորացրումը, տարեկան մեկ անգամ ռազմական բժիշկների պարտադիր ժամկետային զինծառայողների զորակոչ է լինում եւ զորացրում, եւ տարեկան մի անգամ տեղի է ունենում բժշկական անձնակազմի փոփոխություն՝ նրա որոշակի տոկոսի չափով:

– Հատկապես ո՞ր հիվանդությունների բուժմամբ է Ձեր հոսպիտալն աչքի ընկել. հարցը պատահական չի տրված, քանզի մեկ անգամ չէ, որ տարբեր վայրերում լսել ենք, որ մարդիկ ցանկանում են Ձեր ղեկավարած բուժհիմնարկի սպասարկումից օգտվել:

– Այսպիսի մի ձեւակերպում կա մեր ոլորտում՝ որակավորված բժշկական օգնության ծավալ, այդ ծավալով էլ սահմանափակվում ենք: Դիմածնոտային վիրահատումը վեց ամիս առաջ է հոսպիտալում

էջ 4

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղը տնօրենի նոր պաշտոնակատար ունի

Դեկտեմբերի 9-ին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի տնօրենի նոր պաշտոնակատար է նշանակվել տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Կոստանդյանը, ով մինչ այդ զբաղեցրել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնը:

Ծնվել է 1975թ. մայիսի 5-ին Երեւան քաղաքում:

1982-1992թթ. սովորել է Սիսիանի N3 միջն. դպրոցում: 1992-1996թթ. սովորել է ՀՊՃՀ-ում եւ ստացել «Մեքենաշինական արտադրության էկոնոմիկա եւ կառավարում» մասնագիտության ճարտարագիտության բակալավրի որակավորում: 1996-1997թթ. սովորել է Հայաստանի Ամերիկյան համալսարանում «Արդյունաբերական ճարտարագիտություն» մասնագիտությամբ: 2002-2004թթ. սովորել է ՀՊՃՀ մագիստրատուրայում եւ ստացել «Ճարտարագիտության մենեջմենթ» մասնագիտության մագիստրոսի որակավորում: 2007թ. դարձել է տնտեսագիտական գիտությունների թեկնածու, 2009թ. ստացել դոցենտի գիտական կոչում:

2000-2005թթ. դասախոսել է ՀՊՃՀ Գորիսի մասնաճյուղում եւ համատեղության կարգով աշխատել «GTZ» գերմանական կազմակերպությունում՝ դասընթացավար: 2001-2005թթ. ԱՄՆ դեպարտամենտի կողմից ֆինանսավորվող IREX/IATP ինտերնետի մատչելիության եւ վերապատրաստման կրթական ծրագրի Գորիսի կենտրոնի կոորդինատոր է եղել: Հանդիսացել է Սյունիքի մարզի բուհերի 2003-2004 ուստարվա ընդունելության մարզային հանձնաժողովի համակարգչային կենտրոնի ղեկավար: 2004թ. աշխատել է «Տեղեկատվական եւ նոր տեխնոլոգիաներ» ՀԿ նախագահ: 2005-2006թթ. աշխատել է ՀՊԱՀ Սիսիանի մասնաճյուղում՝ պատասխանատու քարտուղարի տեղակալ: 2006-2016թթ. աշխատել է ՀՊԱՀ Սիսիանի մասնաճյուղում՝ մասնաճյուղի տնօրեն:

Գիտական վեց հոդվածի, մեթոդական մեկ ուղեցույցի եւ ուսումնական մեկ ձեռնարկի հեղինակ է:

2010թ. ՀՊԱՀ-ից ստացել է ոսկե հուշամեդալ: 2015թ. ՀՀ ԿԳ նախարարության կողմից կրթության, գիտության ոլորտում ներդրած ավանդի համար եւ ՀԱԱՀ-ի հիմնադրման 85-ամյակի կապակցությամբ պարգեւատրվել է պատվոգրով:

Ամուսնացած է, ունի 3 որդի: ■

Երկու բուժկենտրոնում նոր տնօրեն կլինի. ֆինանսական խնդիրների պատճառով աշխատավարձերն ուշանում են

2017 թվականի հունվարի 31-ին Սյունիքի մարզպետարանում կանցկացվի երկու մրցույթ: Քաջարանի եւ Սիսիանի բժշկական կենտրոններն այս պահին տնօրեն չունեն, եւ հայտարարվել է թափուր պաշտոնի մրցույթ:

Քաջարանի բժշկական կենտրոնի մեզ հետ զրուցած աշխատակիցների համար նախկին տնօրեն Հովիկ Դավթյանի պաշտոնանկության պատճառներն անհայտ էին: Նրանք սակայն տեղեկացնում էին, որ 4-5 ամսվա աշխատավարձ իրենց չի վճարվել: Բացի այդ, հաստատության աշխատակիցներն արդեն երկու տարի զրկված են ամենամյա վճարովի արձակուրդից: Այսինքն՝ հանգստի գնալ կարող են, սակայն առանց վարձատրվելու:

Երկարամյա զինվորական բժիշկ, գնդապետ Հովիկ Դավթյանը, խոսելով պաշտոնից ազատվելու պատճառների մասին, մի քանի հանգամանք թվարկեց: Ըստ այդմ, որոշել է վերադառնալ Երեւան, որովհետեւ ընտանիքից հեռու ապրել այլեւս չի կարող, քանի որ զույգ տղաները ժամկետային զինծառայության են մեկնել, շուտով էջմիածնից տեղափոխվելու են Նոյեմբերյան, եւ նրանց տեսակցելու համար ամեն անգամ կդժվարանա այդքան մեծ հեռավորությունը հաղթահարել: Բացի այդ, ըստ նրա, ինքն այլ աշխատանքի է անցնելու առողջապահության նախարարությունում: Այլ մանրամասներ Դավթյանը չնշեց՝ ասելով, որ դա կորոշի նախարարը՝ կառուցվածքային փոփոխություններից հետո:

Իսկ Քաջարանի բժշկական կենտրոնը ղեկավարելու համար, ինչպես տեղեկացրեց արդեն նախկին տնօրենը, իրեն, որպես փորձառու բժշկի, հրավիրել էին մարզպետարանից՝ հույս ունենալով կարգավորել հեպատիտ C-ի հետ կապված հայտնի խնդիրը, երբ 2014 թվականին բուժհաստատություն ընդունված բազմաթիվ հիվանդներ այնտեղ առողջական նոր խնդիրներ էին ձեռք բերել՝ վարակվելով հեպատիտ C-ով:

«Այդ հարցերը արդեն կարգավորված են: Հիմա ամեն ինչ իր ռելսերի վրա է, խնդիր չկա այնտեղ: Դրա համար ես այլեւս անելիք չունեի: Գործը մտել է դատարան, հինգ հոգի մեղադրվում է», – ասաց Հովիկ Դավթյանը: Իսկ աշխատավարձերի պարտքի մասին էլ ավելացրեց, որ դա եղել է իրենից առաջ եւ պայմանավորված է այն հանգամանքով, որ հեպատիտ C-ի պատճառով հիվանդանոցը չի աշխատել ամբողջ

9 ամիս, դրանից հետո էլ մի քանի ամիս բնակչությունն ուղղակի խուսափում էր այդ բուժկենտրոնից, ինչով պայմանավորված էլ առաջացել են ֆինանսական դժվարություններ: Քաջարանի բժշկական կենտրոնի նախկին տնօրենը համոզմունք հայտնեց, որ մինչեւ Նոր տարի աշխատակիցները կստանան իրենց գումարները:

«Ամեն տարի կոմբինատի աշխատողները կոմբինատի գումարներով անցնում են դիսպանսերիզացիա՝ խորացված բուժզննություն: Այդ գումարները կոմբինատը տալիս է, հիվանդանոցը պարտքերը փակում է: Անցյալ տարի էլ է նույն վիճակը եղել: Միշտ կոմբինատը օգնել է հիվանդանոցին, այսօր էլ օգնում է: Բուժհաստատությունը հագեցրել է ժամանակակից ու թանկարժեք բուժսարքավորումներով: Առանց կոմբինատի օգնության այդ հիվանդանոցը ի վիճակի չէ գոյատեւելու», – ասաց Հովիկ Դավթյանը:

Ինչ վերաբերում է չվճարվող արձակուրդներին, նա պատասխանեց. *«Գումարների հետ կապված*

էջ 5

Լույս է տեսել Հռիփսիմե Զաքարյանի «Շարլ Ազնավուր» մենագրությունը

2016թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում լույս է տեսել երիտասարդ բանասեր Հռիփսիմե Զաքարյանի «Շարլ Ազնավուր» մենագրությունը, որ նվիրված է աշխարհահռչակ հայ շանսոնյե եւ օտարագիր գրականության ֆրանսիական թեւի բացառիկ ներկայացուցիչ Շարլ Ազնավուրին, ում մեջ երգիչն ու բանաստեղծն ասես միաբանվելով՝ ստեղծել են բանաստեղծական արվեստի այնպիսի գործեր, որոնք պատիվ կբերեն ցանկացած դասական բանաստեղծի:

Քննելով Ազնավուրի բանաստեղծական ժառանգության մոտիվներն ու գեղարվեստական առանձնահատկությունները՝ նա փորձել է ներկայացնել Շարլ Ազնավուր բանաստեղծի տեղն ու դերն օտարագիր հայ գրականության մեջ:

Ինչպես նշում է ուղերթի խոսքում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրականագետ Կիմ Աղաբեկյանը. *«Հռիփսիմե Զաքարյանի ուսումնասիրությունը հրաշալի տպավորություն է թողնում ընթերցողի վրա: Նրա առաջադրած խնդիրներն արդիական են եւ ինքնատիպ: Նա մանրամասնությամբ ուսումնասիրել է Ազնավուրի մասին գրված գրքերն ու հոդվածները, երգարվեստի շուրջ եղած կարծիքները, ուսումնասիրել դրանց առանձնահատկությունները, շրջառության մեջ դրել Ազնավուրի՝ երեւույթների նկատմամբ ունեցած մոտեցումների ներհոգեկան ընկալումները:*

Հռիփսիմե Զաքարյանի գիրքը բացում է մեծ երգչի՝ իրականության, ազգային հոգեբանության ներքին շերտերը, հանդիպումի հրճվանքը լիցքավորում բաժանումի տագնապով: Երգը բանաստեղծություն է, բանաստեղծությունը՝ երգ: Հռիփսիմեն ընդգծում է մեծ շանսոնյեի ստեղծագործական առանձնահատկությունները: Նա երգի մեղեդայնությունը եւ բանաստեղծական գյուտը ներդաշնակել է համահունչ ամբողջության մեջ:

Հռիփսիմեի այս ուսումնասիրությունը գրված է մեծ սիրով ու նվիրումով եւ արժանի է տպագրության»:

Գիրքը կազմված է ներածությունից, երկու գլխից եւ վերջաբանից: Ներածության մեջ հեղինակը համառոտ ներկայացնում է օտարալեզու հայ գրականության ծագումը, որոշ հայազգի հեղինակների եւ անդրադառնում սփյուռքահայ գրականությանը բնորոշ որոշակի առանձնահատկություններին: *«Ազգային ոգու առկայությունը եւ հայ գրական ընտանիքին պատկանելու ցանկությունը բավարար նախադրյալներ են՝ ասելու, որ օտարագիր հայ գրողներից շատերի երկերը պատկանում են նաեւ հայ գեղարվեստական մտքին: Թեեւ ազգային գրականության առաջնահերթ նախապայմանը մայրենի լեզուն է, բայց պատմական ճակատագրով իր հայրենիքից տարագրության դատապարտված հայության համար այդ գրականությունը պետք է համարել ազգային գրականության մաս, - նշում է հեղինակը եւ հավելում, - օտարագիր հայ գրողի ստեղծագործության հիմնական արժարժումներից են ինքնաճանաչումն ու ինքնաբացահայտումը: Գրողը ինքնադրսեւորվելու, իր հույզերն ու խոհերը արտահայտելու համար պետք է իմանա, ճանաչի իրեն եւ հայտնաբերի սեփական էության հատկանիշները, հոգեբանության ու մտայնության ակունքները»:*

«Կյանքի ստեղծագործական ուղին» վերնագրով առաջին գլխում Հռիփսիմե Զաքարյանը ներկայացնում է աշխարհահռչակ շանսոնյե Շարլ Ազնավուրի ստեղծագործական կյանքի դժվարին, բայց ազնիվ ու մաքրամաքուր ընթացքը՝ իր խոսքն ավարտելով նրա մարդկային անզուգական կերպարի գնահատանքով ու երկարակեցության մաղթանքով. *«Ազնավուրը որոշել է ապրել 100 տարի եւ միշտ լինել բեմում ու տա Աստված, որ նրա կյանքը, որը պայծառ եւ ուսանելի մի հրաշալի ֆիլմ է՝ աշխատասիրության, սիրո, հումանիզմի, հայրենասիրության դասերով, շարունակվի»:*

Գրքի՝ «Բանաստեղծ երգիչը» երեք ենթավերնագրից բաղկացած երկրորդ գլխում հեղինակը բացահայտում է Շարլ Ազնավուր բանաստեղծին՝ իր քնարական նուրբ աշխարհով:

«Շանսոնը՝ երաժշտարվեստի ժանր» ենթագլխում հեղինակը համառոտ ներկայացնում է շանսոնի ծագման պատմությունը՝ նշելով, որ շանսոնը երաժշտարվեստի ժանր է, որի ծնունդն ու պատմական զարգացումը տեղի են ունեցել Ֆրանսիայում: Հարյուրամյակներ առաջ շանսոն կատարող երգչին անվանում էին տրուբադուր (ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է գտնել, հայտնագործել): 16-րդ դարից սկիզբ առած երգարվեստի նոր՝ շանսոն ժանրն ապրել է իր պատմական զարգացումը: *«Շանսոն ժանրի առանձնահատկությունը ոչ միայն երաժշտությունն է, այլեւ ունկնդիրների հետ անմիջական շփումը: Հավանաբար, հենց այդ պատճառով բոլոր ժամանակներում շանսոնը մեծ հաջողություն է ունեցել ունկնդիրների շրջանում»:*

«Թարգմանչական արվեստի հնարավորությունների կիրառումը Շարլ Ազնավուրի պոեզիայում» ենթագլխում ազնավուրյան երգերի թարգմանությունների շուրջ է հեղինակը խոսք ծավալում՝ անդրադառնալով Աբրահամ Ալիքյանի, Սամվել Գասպարյանի, Պերճ Թյուրաբյանի կատարած թարգմանություններին: *«Ա.Ալիքյանի եւ Ս.Գասպարյանի հայերեն թարգմանությունները հնարավոր չէ երգել, քանի որ թարգմանիչները առավելաբար ընթերցելու, ոչ թե երգելու համար են նախատեսել թարգմանությունները: Դրանք օգնել են մեզ՝ գիտակցելու, թե ինչ բանաստեղծ է Ազնավուրը, իսկ Թյուրաբյանի թարգմանությունները, որոնք արվել են հատկապես երգելու համար, նաեւ բացարձակ բանաստեղծական են եւ որքան բնագրին են հարազատ, այնքան էլ երաժշտական են»,* – գրում է հեղինակը:

«Շարլ Ազնավուրի պոեզիայի գեղագիտական առանձնահատկությունները» ենթագլխում հեղինակը բացահայտում է Շարլ Ազնավուր բանաստեղծին՝ վերլուծելով հատկապես նրա առավել հայտնի երգ-բանաստեղծությունները: «Ազնավուրի երգերի աշխարհը յուրօրինակ համրագիտարան է, որում ամեն ինչ կա: Նա, ինչպես արդեն նշել ենք, գրել է տարբեր մոտիվներով, բայց իր երգերի թեման կյանքն է՝ բոլոր կողմերով հանդերձ», – ընդհանրացնում է Հ.Զաքարյանը:

Որպես վերջաբան՝ երիտասարդ բանասերն իր խոսքն ամփոփելով գրում է. *«Փոքր ազգի մեծ Մարդը, որը մեծ ազգերի կողմից դեռեւս տասնամյակներ առաջ գրականության եւ արվեստի բնագավառում արժանացել է դափնիների, արժանի է, որ իր իսկ ժողովրդի կողմից գնահատվի ըստ արժանվույն եւ քաղաքական գործիչ ու բարեգործ Ազնավուրի հետ մեկտեղ գնահատվի նաեւ բանաստեղծ երգիչը: Եվ ինչպես սերն է հավերժորեն իշխում երկրի վրա, այնպես էլ նրա հավերժական թեմաների շուրջ պտտվող երգերը, որոնք, անշուշտ, կապրեն հավերժորեն, նաեւ հայերենով կհնչեն ու կթեւածեն աշխարհի բոլոր անկյուններում...»:*

Ողջունելի է, որ երիտասարդ բանասեր Հռիփսիմե Զաքարյանն իր գիտական գործունեությունը սկսել է մի այնպիսի տաղանդավոր հայ մարդու բանաստեղծական աշխարհի ուսումնասիրությամբ, ինչպիսին Շարլ Ազնավուրն է: Մաղթենք նրան բանասիրության բնագավառում նորանոր հաջողություններ եւ բեղմնավոր աշխատանք:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եկեք խոսենք հայերեն

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ես գյուղում եմ ծնվել, մանկությունս ու պատանեկությունս էլ անցկացրել այնտեղ: Շատ լավ եմ հիշում, որ գյուղաբնակներս մի տեսակ արհամարհանք էինք ցուցաբերում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր խոսում էին գրական հայերենով կամ իրենց բարբառային խոսքի մեջ պատահականորեն որեւէ գրական բառ օգտագործում: Նման առիթներ հատկապես շատ էին լինում ամռան ամիսներին, երբ գյուղ էին գալիս հովեկները: Հավանաբար վերաբերմունքն այդ երեւույթի նկատմամբ բոլոր գյուղերում է այդպես եղել:

Տասնյակ տարիներ են անցել, մեր կյանքում շատ բան է փոխվել, այդ թվում նաեւ վերաբերմունքը մայրենի լեզվի նկատմամբ: Բայց այդ փոփոխությունը չի բերել վիճակի շտկմանը, այլ «արհամարհանք» ասված հասկացությունն է տեղափոխել այլ հարթություն: Այսօր այդպիսի վերաբերմունք է ցուցաբերվում նրանց նկատմամբ, ովքեր չեն տիրապետում ժարգոնին, փողոցի լեզվին: Այն դարձել է իշխող: Վերջինիս դերակատարումն այնքան է կարեւորվել, որ մերօրյա երիտասարդն այս «լեզուն» ավելի հաճույքով է ուսումնասիրում, «յուրացնում», քան որեւէ օտար լեզու: Դա բերել է նրան, որ կրթության փաստաթղթային եւ իրական վիճակներն իրարից խիստ տարբերվող բաներ են: Ասվածն ակնհայտ է գյուղական երիտասարդության շրջանում: Էյֆորիան վատ խորհրդական է: Գյուղական դպրոցների տղա շրջանավարտների զգալի մասը վարժ գրել-կարդալ չգիտի:

Ոչ ոք չի ժխտում, որ ազգի ապագան եւ կրթությունը փոխշաղկապված են: Հայտնի փաստ է, որ աշխարհի զարգացած երկրների տնտեսություններն ուղիղ համեմատական են կրթական մակարդակին: Կրթության կարեւորագույն դերը չեն ժխտում նաեւ ազգիս լիդերները, բայց չժխտելով դա, այդպես էլ անցած 25 տարիների ընթացքում չավարտեցին էքսպերիմենտ-փորձարկումները դպրոցում. դրանք դեռ շարունակվում են:

Մայրենի լեզվի անաղարտ պահպանման, զարգացման գործում դպրոցի, մնացած ուսումնական հաստատությունների դերակատարումն անուրանալի է, բայց պակաս դերակատարում չունեն նաեւ մեր կյանքի մյուս ինստիտուտները: Անհատի ուսուցման շղթայի մաս են փողոցը եւ լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը, որոնց մասին էլ կխոսենք:

Ժողովուրդը միշտ էլ նուրբ հումորով է վերաբերվել մեր գեղեցիկ բարբառների մեջ օտար բառերը, բառակապակցությունները հայացնելու փաստերին: Արցախցի տատիկը հարեւանին հայտնում է՝ ուգլավոյի մագազինում մալակո են տարգավատ անում: Հայերեն միտք արտահայտող նախադասության հինգ բառից չորսն օտար լեզվից են: Կամ էլ իբր Շիրակի բարբառով է հայտնի աշուղի բանաստեղծական հետեւյալ տողը՝ սազը դոշիս չալելով ջեյրան կերթամ, որտեղ, ինչպես ասում են, հայերեն բառի հոտ էլ չկա:

Գործնական մի հանդիպման համար ժամադրվել էի Երեւանի բացօթյա սրճարաններից մեկում: Սուրճ էի պատվիրել ու սպասում էի: Սրճարանի տարածքում հայտնվեց մի զույգ եւ շարժվեց դեպի իմ հարեւանությամբ սեղանը: Ուշադրություն չէի դարձնի, եթե աղջիկը շատ գեղեցիկ չլիներ: Ես գեղեցիկ ասեմ, դուք չքնաղ հասկացեք: Նման դեպքերի համար է ասված՝ «ոչ ուտես, ոչ խմես» արտահայտությունը: Զույգը տեղավորվեց, իսկ ես էլ այդ ընթացքում պատշաճության սահմաններում դիրքս այնպես հարմարեցրի, որ նրանց շարժուձեւից ոչինչ բաց չթողնեմ: Նկատեցի, որ զույգը ոչ միայն իմ ուշադրության կենտրոնում է: Տղան հարցրեց, թե ինչ կցանկանա խմել: Հետեւեց պատասխանը, որը նրա գեղեցկությունը լղոզեց, կարծես գլուխգործոց գեղանկարի վրա դույլով ներկ շպրտեցին՝ հեչ բան էլ պետք չի, մի բաժակ կակավոյ զակազ տուր: Երանի լսած չլինեի: Շուտով ընկերս եկավ, բայց ես արդեն ի վիճակի չէի այդ միջավայրում մնալ:

Այսօրվա միջին եւ ավագ սերունդը մայրենի լեզվից զատ տանելի չափով տիրապետում է նաեւ ռուսերենին: Դա հնարավորություն է տալիս նրանց, որ երբ ձանձրանում, հոգնում, իսկ ավելի հաճախ՝ հիասթափվում են հայկական հեռուստահաղորդումներից, փոխում են ալիքները եւ կամա թե ակամա՝ համեմատում հաղորդումների մակարդակները: Հասկանալի է, համընկնող եզրերը շատ քիչ են: Անկախ տրվող հաղորդումների թեմատիկայից, հայկականը երկրորդ տեղում է: Ի՞նչ է, լեզվի մաքրությունն է՞լ կապ ունի երկրի մեծության կամ ռազմական հզորության հետ: Դժվար թե: Որպեսզի ասվածը մերկապարանոց չհնչի, բոլորովին էլ անհրաժեշտություն չկա հատուկ այդ նպատակով հետեւել հաղորդումներին: Հաղորդումների մեծ մասը լեփ-լեցուն է հայոց լեզվի աղավաղման «գոհարներով»: Այն, որ հաղորդումների հյուրերը մայրենի լեզվով մաքուր չեն խոսում, տանելի է, բայց որ ծրագրի հեղինակները, հաղորդավարները չեն տիրապետում մայրենիին՝ վիրավորական է, շատ-շատ, այնքան շատ, որ ցանկանում ես ասել՝ քո փոխարեն ես եմ ամաչում: Բայց իրականում գիտե՞ք ովքեր պետք է ամաչեն: Առաջինը՝ այդ հաղորդավարների համալսարանական դասախոսները, ովքեր խոսքի վարպետությունից նրանց դրական գնահատական են դրել եւ կյանքի ուղեգիր տվել, մայրենիի այն դասախոսները, ովքեր աչք են փակել իրենց ուսանողների կողմից բայի դեմքերը, նույն նախադասության մեջ ներկան, անցյալն ու ապառնին, եզակին ու հոգնակին իրար խառնելու, շիլա-շփոթ եփելու համար, եւ վերջում՝ նրանք, ովքեր ստորագրություն են դրել նմաններին աշխատանքի ընդունելու հրամանների տակ: Մի քանի ծաղիկ իմ «ծաղկաքաղից»:

«Գեղեցիկ ձախ ձեռքով հարվածում է» (27.06.14:00 «Երկիր մեդիա»), «Գույնավոր վազքով կգանք» (28.06.10:00 Հ1), «Բերկրանք ապրեցինք սիրելի հայ ժողովրդին» (նույն հաղորդման ընթացքում), իսկ «նա ասաց, որ ես կգամ», կամ «չեմպիոնը խոստացավ, որ ես կհաղթեմ» արտահայտությունները կլսեք ցանկացած ժամի: Զարմանալին այն է, որ հեռուստաալիքների տերերը ծրագրերից հանել կամ ինչ-ինչ պատճառներով չեղարկել են «Մեր լեզուն, մեր խոսքը», «Եկեք խոսենք հայերեն» հաղորդաշարերը, իսկ դրանց փոխարեն ներառել արտերկրից գնված, ժամանակի ժանգն ու փոշին վաղուց իր վրա կրող հաղորդումներ (զորօրինակ՝ Ավետ Բարսեղյանի կողմից շատ վատ վարվող

էջ 8

Մասնագիտության օրեր Կապանում

Հոկտեմբերի 20-21-ին «Մասնագիտության օրեր մարզերում» ծրագրի շրջանակներում Գորիս եւ Կապան քաղաքներում Երեւանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ներկայացուցիչները (համալսարանի դասախոսներից, ուսանողներից եւ կամավորներից կազմված 60 հոգանոց թիմը) հանդիպեցին դպրոցի տնօրենների, ուսուցիչների եւ աշակերտների հետ: ԵՊԼՀ-ն հայաստանյան բուհերից միակն է, որ ֆորմալ կրթության հետ համատեղ իրականացնում է նաեւ ոչ ֆորմալ կրթություն:

ԵՊԼՀ կարիերայի կենտրոնի ղեկավար Լեւոն Բաբամյանի խոսքերով՝ արդեն մի քանի տարի է՝ հանրապետության մարզերում անց է կացվում «Մասնագիտության օրեր մարզերում» ծրագիրը, որ նպատակ ունի դպրոցների շրջանավարտներին ներկայացնել համալսարանում դասավանդվող լեզուները, իրականացվող բոլոր կրթական ծրագրերը եւ դրանց հնարավորությունները: *«Համալսարանը մեկ այլ նպատակ եւս ունի՝ նպաստել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը եւ հետագայում աշխատանք գտնելուն»,* – հավելեց Լ.Բաբամյանը՝ այն համոզմունքը հայտնելով, որ շատ հաճախ բուհ են ընդունվում՝ առանց պատկերացնելու, թե որտեղ եւ ինչու են եկել:

Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցում, բացի տնօրենների եւ ուսուցիչների հետ հանդիպումից, սրահներից մեկում այցելուները հնարավորություն ունեցան ծանոթանալ տարբեր երկրների մշակույթին, խոհանոցին, ազգային տարազներին: Համալսարանի դասախոսները եւ կամավորները ներկայացրին նաեւ այն լեզուները (ավելի քան 20 լեզու), որոնք դիմորդները կարող են ուսումնասիրել եւ սովորել:

Լ.Բաբամյանը Սյունիքի մարզ կատարած այցը համարեց արդյունավետ, քանի որ շատերը ցանկություն հայտնեցին իրենց համալսարանում ուսանելու, թեպետ եւ պետք է նշենք, որ մեր մարզից բազում դիմորդներ են այնտեղ սովորում:

Այսօրվա գործատուների մեծամասը պահանջում է օտար լեզվի պարտադիր իմացություն, քանի որ համաշխարհային փորձը կիրառելու համար դա անհրաժեշտ նախապայման է: Ուստի ԵՊԼՀ-ում գործող տարբեր ծրագրերը լայն հնարավորություններ են ընձեռում շրջանավարտներին նաեւ հետագայում աշխատաշուկա մտնելու եւ մրցունակ լինելու համար:

Սոցիալական զարգացման եւ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Ցոլակ Ակոպյանը եւ Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար Արթուր Մնացականյանը համագործակցության հուշագիր ստորագրեցին: Ինչպես Ց.Ակոպյանը նշեց, դպրոցների հետ համագործակցությունն ավելի գործնական հիմքերի վրա դնելը, նախեւառաջ, ուսանողի շահերից է բխում, քանի որ բուհ ընդունվելիս հաճախ առաջնորդվում են ծնողի կամ շրջապատի մարդկանց կարծիքով, ինչը հաճախ կարող է եւ չհամապատասխանել նրա ցանկություններին: Ուստի ԵՊԼՀ-ն որոշել է «անձամբ», նախքան բուհ ընդունվելը, շրջանավարտներին ներկայացնել իր հնարավորությունները:

Ց.Ակոպյանը տնօրեններին եւ ուսուցիչներին համառոտ ներկայացրեց նաեւ համալսարանի հնարավորությունները՝ նշելով, որ տնօրենների ցանկության դեպքում բուհը կարող է համագործակցել յուրաքանչյուր դպրոցի հետ:

Համալսարանի Կոնֆուցիուսի ինստիտուտի տնօրեն Յան Մեյխուան նշեց, որ ինստիտուտի նպատակն է ցանկացողներին ծանոթացնել չինարենին եւ չինական մշակույթին, ամրապնդել համագործակցությունը Չինաստանի եւ Հայաստանի միջեւ: Յ.Մեյխուան տեղեկացրեց նաեւ, որ ինստիտուտը հնարավորություն է ընձեռում ուսանել Չինաստանում ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծրագրերով: *«Ասում են՝ չինարենը դժվար լեզու է, բայց երբ մեկ տարի առաջ որոշեցի սովորել հայերեն, համոզվեցի, որ ամենադժվար լեզուն հայերենն է: Եթե կարողանաս պատկերացնել չինարենի ընդհանուր համակարգը, ապա ոչ մի դժվարություն չի լինի»,* - անկեղծացավ Յան Մեյխուան եւ հավելեց, որ եթե մարզում հետաքրքրվեն չինարենով եւ չինական մշակույթով, ապա հնարավոր է ստեղծել առանձին անկյուն եւ կենտրոններ:

Լեւոն Բաբամյանը նշեց նաեւ, որ ոչ ֆորմալ կրթությունը հնարավորություն է տալիս ուսանողներին հետագայում ավելի հեշտ հաղորդակցվել տարբեր երկրների ներկայացուցիչների հետ, քանի որ այն ուսուցանում է նաեւ տվյալ ժողովրդի խոսակցական լեզուն, կենցաղը եւ այլն: Մասնագիտական կողմնորոշման հարցում կարեւորելով նաեւ ուսուցիչների դերը՝ կարիերայի կենտրոնի ղեկավարը նշեց, որ ցանկալի է դպրոցների հետ ակտիվ համագործակցությունը: Ի դեպ, համալսարանում դասավանդող օտարերկրացի դասախոսները միջպետական եւ միջբուհական հարաբերությունների ամուր հիմք ստեղծողներից են:

Ներկաներին հաճելի էր լսել նաեւ ավստրիացի կամավոր Անդրեայի հայերեն խոսքը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեզուների իմացությունը՝ աշխատանքի ընտրության լայն հնարավորություն

Գորիսի Ս.Խանզադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի դահլիճում էին հավաքվել քաղաքի տարբեր դպրոցներից աշակերտներ, մանկավարժներ: Նրանց այդտեղ էր բերել «Մասնագիտական օրեր» ծրագրի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը: Ծրագրի շրջանակում Գորիս էր ժամանել Երեւանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դասախոսներից, ուսանողներից, կամավորներից կազմված 60 հոգանոց թիմը: Նրանք ներկայացրին տարբեր երկրների մշակույթը, ազգային խոհանոցը, լեզուները: Ի դեպ, ուսանողներն այն երկրի ազգային տարազով էին, որի լեզուն իրենք ներկայացնում էին:

Բոլորի հետաքրքրությունը մեծ էր համալսարանում ուսուցանվող լեզուների նկատմամբ: Համալսարանը Հայաստանի կրթական այն օջախներից է, ուր ամուր հիմքերի վրա է դրված լեզուների ուսուցումը: «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես». ժողովրդական ասացվածքի իմաստը հիմա նորովի է մեկնաբանվում: Համաշխարհային պրոցեսների զարգացումներից հետ չմնալու համար հրատապ է դարձել լեզուների իմացությունը: Լեզու իմացար, ուրեմն, ունես տեղ եւ դեր ժամանակի հոլովույթում:

Գորիսի թիվ 6 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Ինեսա Բարսեղյանը ցանկանում է իրավաբան դառնալ:

– Իրավավաբանին նույնպես անհրաժեշտ է լեզուների իմացությունը: Այս հանդիպումն ինձ հնարավորություն կտա այն լեզուն ընտրել, որն իմ աշխատանքային պրակտիկայում ինձ շատ է պետք գալու: Մենք այստեղ ծանոթացանք նաեւ տարբեր երկրների մշակույթին, ազգային խոհանոցին: Իսկ մարդն ինչքան լայն մտահորիզոն ունենա, նա կկարողանա ժամանակի նետած մարտահրավերներին դիմակայել:

Գայանե Հարությունյանը դասավանդում է Գորիսի թիվ 6 դպրոցում: Նրան հետաքրքրում է իսպաներենը:

– Լեզու սովորելու համար էլ երբեք ուշ չէ, – ասում է ուսուցչուհին: Մի քանի լեզուների իմացությունը մարդուն հնարավորություն է տալիս բազմակողմանիորոն զարգանալ, ավելի հեշտ աշխատանք գտնել:

Համալսարանի պրոռեկտոր Ցոլակ Ակոպյանը եւ կարիերիայի կենտրոնի ղեկավար Լեւոն Բաբամյանն աշակերտներին եւ մանկավարժներին ներկայացրին համալսարանի մասնագիտություններն ու լեզուները: Նրանք նշեցին, որ աշակերտների մասնագիտական կողմնորոշման գործում դեր ունեն ծնողները եւ ուսուցիչները: Այնպես որ դպրոց-բուհ համագործակցությունը հնարավորություն կտա աշակերտին մասնագիտության ընտրության հարցում ճիշտ կողմնորոշվել: Իսկ դա լավ մասնագետ դառնալու անկյունաքարն է :

Համալսարանում ուսուցանվում է 20-ից ավելի լեզու: Ավանդական անգլերենի, ռուսերենի, ֆրանսերենի կողքին այսօր աշակերտները կարող են ընտրել նաեւ չինարեն, հունարեն, արաբերեն, թուրքերեն եւ այլ լեզուներ: Ի դեպ, վերջին շրջանում աճել է հետաքրքրությունը չինարենի նկատմամբ: Հայաստանում Չինաստանի դեսպանատունը հաճախ է դիմում համալսարանին՝ իրենց մոտ չինարենի մասնագետներ աշխատանքի ընդունելու հարցով:

Համալսարանի ուսանողները փորձառություն են ձեռք բերում նաեւ արտասահմանյան բուհերում: Այս կրթօջախի լավագույն ուսանողները սովորում են նաեւ Սորբոնի համալսարանում:

Ի դեպ, համալսարանում ուսանողները ստանում են ֆորմալ եւ ոչ ֆորմալ կրթություն:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ԴԱՆԻԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ. «Եզակի դեպքեր են եղել, երբ վիրավոր զինվորը փոխադրվել է մայրաքաղաք»

էջ 2 ներդրվել, մինչ այդ նման հիվանդների հոսք չի եղել, ես խպիպի (զոբ) վիրահատություն եմ կատարում, բնականաբար մեզ դիմում են Սիսիանից, Գորիսից, Վայքից եւ Եղեգնաձորից, նույնիսկ Ռուսաստանից են գալիս՝ մեր հոսպիտալում վիրահատվելու, Ձեր նշած հանգամանքը մասնագետի ունակություններով է պայմանավորված, ավելի ճիշտ՝ այդ վիրահատությունն իրականացնող մասնագետի առկայությամբ:

– Մեր զրույցի առանցքն ապրիլյան պատերազմն է. երբ հետադարձ հայացք եք նետում այդ օրերի Ձեր գործունեությանը, ի՞նչն եք կարեւորում՝ սկսած այն օրվանից, երբ սկսեցիք վիրավոր զինվորներ ընդունել:

– Ապրիլի 4-ից սկսած Ղարաբաղում տեղակայված հոսպիտալներից եւ հիվանդանոցներից հիվանդներ տեղափոխեցին Զանգեզուրի կայազորային հոսպիտալ: Մարտադաշտում վիրավորում ստացած մոտ հինգ տասնյակի հասնող զինվորական ընդունեցինք: Բացի այդ՝ մեր բժիշկների մի մասն ապրիլի 3-ի երեկոյան Ղարաբաղում էր, նման հրահանգ էինք ստացել. տեղում աջակցել եւ օգնել: Այստեղ տեղափոխեցին միջին ծանրության հիվանդներ, որոնց բուժումը տեղում պիտի շարունակեինք եւ ավարտին հասցնեինք: Եզակի դեպքեր են եղել, որ վիրավոր զինվորը մայրաքաղաք է տեղափոխվել, քանզի մասնագիտացված բուժման կարիք է եղել:

– Հրազենային վիրավորումների վերաբերյալ, հիշում եմ, Կապանում տարիներ առաջ գիտաժողով էր անցկացվել, նաեւ Կապանի հիվանդանոցի նախկին գլխավոր բժիշկ Նիկոլայ Աղախանյանը դոկտորական թեզ էր պաշտպանել «Հրազենային վնասվածքներով վիրավորների բժշկական օգնության առանձնահատկությունները սահմանամերձ գոտու հիվանդանոցում եւ պատերազմական գործողությունների ժամանակ» թեմայով: Այդքան հրազենային վիրավորում ստացած զինվորների բուժումը տարբերվո՞ւմ է մյուսներից:

– Վիրաբուժության մեջ տարբերակում են ռազմադաշտային վիրաբուժությունը, որն ունի իր առանձնահատկությունները: Մի բան է հրազենային վիրավորում ստանալ քաղաքացիական պայմաններում, մի այլ բան է, երբ այն ստանում ես ռազմադաշտում՝ մարտական գործողությունների ժամանակ՝ հողի ու ցեխաջրի մեջ, խրամատի մեջ: Հետո ռազմադաշտն ու հոսպիտալը (խոսքը միայն ապրիլյան պատերազմի մասին չէ) երբեմն մեծ հեռավորության վրա են լինում, արյուն կորցնել կա եւ այլն, եւ այլն:

– Իսկ Ձեզ հաջողվե՞ց այդ ծանր օրերի քննությունը բռնել:

– Հաջողվեց, մեր առջեւ դրված խնդիրը կատարեցինք, նույնիսկ չէինք սպասում, որ մեր հոսպիտալը նման թիկունք կարող է լինել կռվող տղաներին: Զինվորների մեծ մասն այստեղ բուժվելուց հետո վերադարձավ եւ շարունակեց ծառայությունը:

– Ի՞նչ դասեր կարելի է քաղել ապրիլյան պատերազմից, ի՞նչն էր անակնկալ, ի՞նչը կարելի էր ավելի լավ անել, մի փոքրիկ վերլուծություն կատարեք:

– Պատերազմական իրավիճակում գործում ես՝ ստեղծված իրավիճակին համապատասխան, իսկ մեր գործողությունները, այսպես ծեւակերպեմ, ստանդարտից դուրս էին, որոնք նախօրոք մշակվել էին: Իհարկե, այդ մասին մտածում էինք, որ կարելի է առաջարկ անել, փոփոխություն մտցնել բուժսպասարկման ոլորտում, եւ այն ձեւաչափով սկսեցինք աշխատել առաջնագծից սկսած մինչեւ թիկունքային հոսպիտալներ, նույնը՝ մեզ մոտ: Եվ տեսանք, որ մեր տարածաշրջանին, մեր բանակին հակառակորդի կողմից նոր կիրառվող զենքի պայմաններում, շատ ավելի ճիշտ էր մեր մոտեցումը: Ռազմաբժշկության մեջ այսպիսի մի հասկացություն կա՝ էտապային միություն, թե որ փուլում ինչ օգնություն պիտի ցուցաբերվի: Խրամատում, որտեղ կա սանիտարհրահանգիչ, ինչ օգնություն պիտի ցույց տրվի, գումարտակի բուժկետն՝ ինչ, գնդի բուժկետն՝ ինչ, որակավորված բժշկական էտապում՝ ինչ օգնություն: Մենք նախօրոք մտածել էինք այդ սխեման փոխել՝ հաշվի առնելով, որ նախ՝ տարածությունը մեծ չէ, մեծ պատերազմների ժամանակ գումարտակի եւ գնդի բուժկետն ու հոսպիտալը տասնյակ կիլոմետր իրարից հեռու են լինում, գուցե հարյուրավոր կիլոմետրեր հեռու: Ապրիլյան պատերազմում կրճատ-

Երկու բուժկենտրոնում նոր տնօրեն կլինի. ֆինանսական խնդիրների պատճառով աշխատավարձերն ուշանում են

էջ 2

է այդ ամբողջը: Մինչեւ այդ կոմբինատը օգնել է շատ մեծ քանակով, գումարներ է տրամադրել, որ ժողովուրդը ստացել է: Կոմբինատում հիմնականում ոչ տեղի բնակիչներ են աշխատում, եւ այդ մարդիկ այնտեղ գրանցված չեն, իսկ հիվանդանոցին պետությունը գումար տալիս է գրանցված մարդկանց քանակով: Աշխատավարձի ֆոնդը մոտ 12.5 միլիոն է, ինչ պակասել է, կոմբինատը լրացրել է, բայց կապված պղնձի գնի իջեցման եւ այլնի հետ, չի տրամադրել այդ գումարները հիվանդանոցին»:

Դառնալով Սիսիանի բժշկական կենտրոնին, նշենք, որ այս դեպքում տնօրենի պաշտոնը թափուր է մնացել, քանի որ ըստ կառավարության համապատասխան որոշման, արդեն նախկին տնօրենի տարիքն այլեւս թույլ չէր տալիս պաշտոնավարել: Սյունիքի մարզպետարանի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գեւորգյանը տեղեկացրեց, որ Սվետլանա Իսախանյանն այդ պաշտոնը զբաղեցրել է շուրջ մեկուկես տարի, բայց եւ հավաստիացրեց, որ պաշտոնանկության այլ պատճառ, քան նշվածն է, չկա, եւ Իսախանյանը հեռացել է սեփական դիմումի համաձայն:

«Կենսաթոշակի տարիքը 63 է, բայց կառավարության այն որոշման մեջ, որով հաստատված է մրցույթի անցկացման կարգը, հստակ գրված է, որ թափուր պաշտոնի մրցույթին իրավունք ունի մասնակցել 65 տարին չլրացած անձը: Այսինքն՝ եթե անգամ կենսաթոշակի տարիքի է, բայց 65-ը լրացած չէ, մենք չենք կարող այդ մարդու իրավունքները սահմանափակել: Հետեւաբար, նա իրավունք ուներ նախորդ մրցույթին մասնակցելու», – ասաց վարչության պետը:

Քաջարանի բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնանկությանն ու այնտեղ գոյություն ունեցող ֆինանսական խնդիրներին անդրադառնալով էլ Նունե Գեւորգյանը նշեց. *«Դուք կարող եք դիմել այն մարմիններին, որոնք աուդիտ են իրականացնում, կամ մեր ֆինանսատնտեսագիտական վարչությանը եւ այլն: Ամեն դեպքում ես ձեզ ասում եմ, որ նախկին տնօրենն իր դիմումի համաձայն է ազատվել աշխատանքից: Նախկինում կուտակված որոշակի ֆինանսական խնդիրներ էլ կան՝ հեպատիտ C-ի հետ կապված: Քաջարանի բժշկական կենտրոնում լուրջ մենեջմենթ է պետք իրականացնել եւ հիմնական նպատակը դա է, որ այնտեղ այնպիսի մարդ պետք է լինի, որ շատ լուրջ մենեջերական ունակություններ ունենա, որ տվյալ կազմակերպությունը կարողանա ոտքի կանգնեցնել:*

Առողջապահության արդյունավետությունը երկու բաղադրիչ ունի, մեկը նյութատեխնիկական եւ կադրային հագեցվածություն, երկրորդը՝ արդյունավետ կառավարում: Մեր Քաջարանի բժշկական կենտրոնը առաջին մասով ամբողջովին համապատասխանում է, որ լինի արդյունավետ կազմակերպություն: Իսկ կառավարման հարցում ոչ թե մարդը թերացել է, այլ գոյություն ունեն որոշակի այլ տարրեր, ժամանակակից մենեջմենթ պետք է լինի: Երեւի այդ ամենը գումարվել է, եւ ըստ երեւույթին նախկին գլխավոր բժիշկը հասկացավ, որ ինքը ի վիճակի չէ այդ ամենը ապահովել»:

ԱՆՆԱ ՁԱԽԱՐՅԱՆ
08/12/2016
armtimes.com

Դպրոցը՝ հանուն բնապահպանության

Կապանի N2 ավագ դպրոցի աշակերտները մտահոգ են հայրենի քաղաքի շրջակա միջավայրի մաքրությամբ:

Դա հաստատվում է նրանով, որ նրանք մասնակցում են Գյոթեի անվան ինստիտուտի կողմից իրականացվող «Դպրոցը հանուն բնապահպանության. խորհել, հետազոտել, գործել» ծրագրին: Ծրագրի նպատակն է դպրոցականների ուշադրությունը սեւեռել բնապահպանական խնդիրների վրա, այն ամենի վրա, ինչն անդառնալի հետեւանքներ է ունենում շրջակա միջավայրի վրա, նաեւ ճշտել, թե կոնկրետ ինչն է հուզում աշակերտին. իրենց քաղաքի շրջակա միջավայրի աղտոտվածությո՞ւնը, ջրի, օդի մաքրությո՞ւնը, թե՞ բնական պաշարների արդյունավետ, առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու օգտագործումը:

– Ծրագիրը քննարկվեց աշակերտական խորհրդի նիստում, աշակերտները ոգեւորված էին նախաձեռնությունից, կազմեցինք հանձնաժողով, մեզ օժանդակեցին քիմիայի, կենսաբանության եւ աշխարհագրության ուսուցիչները, պլան մշակեցին, ըստ որի անցկացրինք բաց դասեր, պաստառների մրցույթ դասարանների միջեւ, յուրաքանչյուր դասարան մի նախաձեռնությամբ պիտի հանդես գա: Ընտրեցինք շրջակա միջավայրը պլաստիկ շշերից զերծ պահելու տարբերակը, որովհետեւ դրանք չեն քայքայվում, բացի այդ որոշեցինք դրանցից օգտակար որեւէ բան ստանալ, – ներկայացնում է կրթօջախի գերմաներենի ուսուցչուհի Հասմիկ Հովհաննիսյանը, եւ ավելացնում, *– մեր նպատակը որքան ծրագրին մասնակցելն է, նույնքան էլ նրանց ընդգրկելը հասարակական աշխատանքների մեջ, քաղաքի տարբեր վայրերից՝ Հալիձորի բերդից, Վաչագան գետից, մանկական գբոսայգուց, Նժդեհի հուշահամալիրից մոտ 700 պլաստիկե շիշ ենք հավաքել, համագործակցել ենք քաղաքապետարանի կոմունալ ծառայության հետ: Պարզեցինք, որ մարդկանց մեջ դեռեւս արմատավորված չէ այն գիտակցությունը, որ պլաստիկ շշերը պիտի առանձնացնել կենցաղային աղբից:*

Տարբեր վայրերից հավաքված պլաստիկ շշերից դպրոցականները բազմոց են պատրաստել, շշերի խցաններից՝ դեկորատիվ ծառ: Սա ծրագրի առաջին փուլն է, որը տեսանյութի տեսքով ուղարկվեց Մոսկվա, որտեղ ռուս եւ գերմանացի բնապահպանները կուսումնասիրեն բոլոր նախագծերը, եւ փետրվարի կեսերին կհրապարակվեն մրցույթի արդյունքները:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Տաթեւի վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնման ավարտը՝ հաջորդ տարի

էջ 1

թվականներին Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաշինումը նախագծել էր Հայաստանի պետշինի նախագահ Գրիգոր Աղաբաբյանը: Մի տխուր պատմություն կա կապված նրա հետ: Եկեղեցին վերականգնելիս մի անգամ լուր ստացվեց, որ գմբեթի մեջ վերականգնողները սխալ են թույլ տվել: Փաստորեն աղավաղել էին ճարտարապետի չափագրումը: Նա եկավ Տաթեւ, պահանջեց քանդել եւ ուղղել սխալը: Չափազանց վատ տարավ կատարվածը: Սիրտը չդիմացավ…

Տաթեւի բոլոր շինությունները կառուցված են բազալտի մաքուր տաշած քարով, որի հանքը գտնվում է հենց Տաթեւի ծորում: Եկեղեցիների վերանորոգման ժամանակ օգտագործվող շինաքարը միշտ էլ տարաձայնությունների տեղիք է տվել, նույնը՝ Վահանավանքի վերականգնման դեպքում: Մեր այն նկատառմանը, որ Սուրբ Աստվածածինը վերակառուցվում է սիսիանյան բազալտով, այլ ոչ թե Տաթեւի հանքի քարով, Սանահին Մանասյանը պատասխանեց, որ Տաթեւի քարի հանքը փակ է: Վերականգնողական աշխատանքներում օգտագործվում է կրաշաղախ, ըստ ռեստավրացիոն միջազգային օրենքների՝ վերականգնողական աշխատանքներում արգելվում է նորագույն նյութեր օգտագործել: Օգտագործվող կրաշաղախին խառնում են ռեստավրացիայի համար հատուկ ստեղծված իտալական հավելանյութեր, որոնք որակ եւ ամրություն են ապահովում:

– Եկեղեցին վերականգնվում է, իսկ նրա շրջակայքում պեղումներ կատարվո՞ւմ են: Եթե ինչ-ինչ հողային աշխատանքներ են կատարվում, դրանց նախորդո՞ւմ են պեղումները: Հողի տակ են մնում եւ մասունքներ, եւ գերեզմաններ, գուցե վիմական արձանագրություններ, ինչո՞ւ նախ պեղումներ չանել, հետո վերականգնողական աշխատանքներ, – սրանք լուծում պահանջող հարցեր են:

Սանահին Մանասյան
Վանքի ռեստավրացիոն աշխատանքների որակը հսկող

«Դա մի քիչ ցավալի հարց է, – նկատեց Ս.Մանասյանը, – քանզի պեղումներ ասվածը չի կատարվել, եւ եղել են դեպքեր, երբ շինարարության ընթացքում հանդիպում են ինչ-ինչ գտածոներ, դիմում են Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի մասնագետների օգնությանը»:

Սեյսմավտանգ տարածաշրջանում ենք ապրում (ահավասիկ, 1931, 1968 թվականների երկրաշարժերը Սյունիքում), ռեստավրացիոն աշխատանքներում քանի՞ բալի ամրություն են նախատեսում: Տեղեկացրին, որ համաձայն քաղաքաշինության նորմերի՝ նման կառույցների դեպքում յոթ բալ է նախատեսված՝ անկախ նրանից, որ ՀՀ-ում հաշվարկայինն ինը բալ է:

Ե՞րբ է եկեղեցու ռեստավրացիոն աշխատանքների ավարտը, զրույցի վերջում հարց ուղղեցինք Ս.Մանասյանին, ում փոխանցմամբ 2017 թվականին լրանում է Տաթեւի վանական համալիրի հիմնադրման 1111-ամյակը, այդ «գոլդ» տարեթվի առիթով, հաջորդ տարվա նոյեմբերին նախատեսում են ավարտին հասցնել եկեղեցու վերականգնումը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ված տարբերակն էր գործում, որոշ օղակներ կրճատվեցին, շրջանցվեցին դրանք, եւ արդյունքներն էլ գոհացուցիչ էին:

– Այդ պատերազմում հակառակորդն օգտագործեց անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ), դրանք վիրավորների վրա ի՞նչ ազդեցություն ունեցան:

– Հիմնականում այրվածքներն էին գերակշռում: Այսպես ասենք, բեկորային վիրավորումներ, որոնք ուղեկցվում էին այրվածքներով: Գնդակային վիրավորումները շատ ցածր տոկոս էին կազմում:

– Սյունիքում միայն Ձեր հոսպիտա՞լն էր վիրավորներ ընդունում:

– ՀՀ առողջապահության նախարարության հրահանգի համաձայն՝ Գորիսի բժշկական կենտրոնը եւս վիրավորներ ընդունեց, այդտեղ առողջապահության նախարարության մասնագիտական խմբեր էին եկել, նեղ մասնագիտացմամբ բժիշկներ՝ նախարարի տեղակալի գլխավորությամբ:

– Իսկ, ասենք, որեւէ բուժարքավորման պակաս զգացվե՞լ է այդ օրերին:

– Որ ասենք մեր հոսպիտալը հարյուր տոկոսով հագեցած է բուժարքավորումներով, այդպես չէ, բայց բավարար քանակով ապահովված ենք: Ապրիլյան պատերազմի ժամանակ հոսպիտալի մատուցած բուժծառայությունը վերադասի կողմից բարձր է գնահատվել: Մեր հոսպիտալն այն ծառայություններից է, որ անթերի է գործել: Սա թող որպես ինքնագովազդ չհնչի:

– Ապրիլի 9-ին «Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբը գտնվում էր Ջեբրաիլի հոսպիտալում, այնտեղ էլ համոզվեցինք, թե որքան քաղաքացիական բժիշկներ են Հայաստանի Հանրապետությունից պատրաստակամություն հայտնել օգնել ռազմական բժիշկներին: Այդ օրերին բուժանձնակազմը համալրելու խնդիր ծագե՞լ է:

– Մենք զինվորական կառույց ենք եւ ունենք մեր խնդիրները՝ պատերազմական իրավիճակներում գործելու: Մեզ մոտ կամավորականներ են եկել՝ բժիշկներ, նաեւ բժշկական համալսարանի բարձր կուրսի ուսանողներ՝ մոտ տասը հոգի: Նաեւ զանգահարել եւ առաջարկել են իրենց օգնությունը: Բայց նրանց հայտնել ենք, որ անհրաժեշտություն չկա: Իմ մեջ այլ բան է տպավորվել. թե որքան էր համախմբված ժողովուրդն այդ օրերին:

– Իսկ դեղորայքի մատակարարման գործում խնդիրներ չէի՞ն ծագել: Մամուլում շահարկումներ եղան այդ առիթով, թե իբր այրվածքների հետեւանքները վերացնելուն միտված դեղորայքի պակաս զգացվեց:

– Դեղորայքի խնդիր մեզ մոտ չծագեց: Պատերազմը սկսվելուց մի քանի օր հետո, երբ ազգը համախմբվեց, այնքան դեղորայք էին բերել, որ չգիտեինք՝ ինչ անել:

– Մեծ է Ձեր շփումը տարբեր զորամասերի հետ, ինչպիսի՞ն է ժամկետային զինվորների առողջական վիճակը, շշուկներ կան, որ առողջական խնդիրներ ունեցող զինվորներ են նաեւ ծառայում բանակում:

– Իմ համոզմամբ՝ բանակ զորակոչվում են միմիայն զինծառայությանը պիտանի զինակոչիկներ: Չկա մի զինկոմիսարիատ, որի բժշկական հանձնաժողովը բավարարվի միայն իր հետազոտություններով: Հիմա զինակոչիկների զգալի մասը մասնագիտացված հիվանդանոցներում հետազոտվում է եւ նոր միայն զորակոչվում:

– Ապրիլյան պատերազմի օրերին նաեւ մի երեւույթ նկատվեց. դոնորական արյուն հանձնելու շարժում էր սկսվել: Իսկապե՞ս այդ արյան պակասը կար, թե՞ դա մարդկանց ներքին մղումն էր:

– Դոնորական արյան պակաս երբեք չենք ունեցել: Պարզապես եթե մարդիկ օգնություն են բերում-հասցնում դուռդ, ինչպե՞ս կարող ես մերժել: Ազգի համար կրիտիկական պահերին մարդիկ ուզում են մի բանով օգտակար լինել: Մի կոնկրետ դեպք պատմեմ: Ապրիլյան պատերազմի օրերին մի թոշակառու էր եկել հոսպիտալ, դե այդ ժամանակ խստացրել էինք անցուդարձը մեր բուժհիմնարկ: Տեղյակ պահեցին, որ մի պապիկ է եկել, անպատճառ ուզում է մտնել հիվանդասենյակ: Իմացա, որ գնացել է մի քանի կիլոգրամ նարինջ, բանան, բնական հյութ գնել վիրավոր զինվորների համար: Բուժքրոջն ասացի՝ թույլ տվեք՝ իր ձեռքով տանի-հանձնի զինվորներին:

– Ո՞րն է Ձեզ հուզող ամենակարեւոր հարցը, երբ մտնում եք աշխատասենյակ, ի՞նչն է առավել Ձեզ մտահոգում:

– Երեւի այն, ինչ որ հոսպիտալի՝ որպես «Զանգեզուրի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկ ստեղծելու հրամանով եւ կանոնակարգով նախատեսված է, ինչ-որ սահմանված է՝ սպասարկել զորամասերի զինծառայողներին, իրենց ընտանիքի անդամներին, նաեւ քաղաքացիական անձանց, բուժպրոֆիլակտիկ աշխատանքներ կատարել եւ բուժական օգնություն ցուցաբերել:

– Ինչպես տեսնում ենք, ոչ միայն զինվորականությանն եք սպասարկում, այլեւ քաղաքացիական անձանց, բնակչության շրջանում ո՞ր հիվանդություններ են առավել տարածված:

– Ինչպես ամբողջ Հայաստանում, առաջին տեղում սրտանոթային հիվանդություններն են, հետո նյարդային բնույթի հիվանդությունները: Երկու դեպքում էլ մի բացատրություն կա. գերլարված ժամանակներում ենք ապրում:

Զրույցը՝
ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Երկաթե թիթեղիկների մեղեդին

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Գորիսի Ակսել Բակունցի տուն-թանգարանի տնօրեն

Հուլիսյան խաղաղ երեկո էր: Այգու խորքում բազմած տաղավարը պարուրված էր էկոլամպերի սառը, արծաթե լույսով: Դեմ-դիմաց նստած, կանեփաբույր, ութսունը վաղուց գլորած զրուցակցիս աշխույժ աչքերը փայլում էին անսպասելի հանդիպման բերկրանքից: Միայնակ տղամարդը սեղանին դրեց տասնամյակներ շարունակ իրեն ուղեկցող լուցկու ու ծխախոտի տուփերը, որոնց ավելացել էր բջջային հեռախոսը: Երկար ժամանակ չէի հանդիպել նրան: Գորովանքով լեցուն նրա խոսքից հասկացա, որ չէր կորցրել մտքի հստակությունը: Ծերունական զառամախտը բարյացակամ շրջանցել էր նրան ու խնայել: Զգալի գինովցած էր, բայց եւ՝ հաճելիորեն սթափ: Նա նէպմանյան գողական փիլիսոփայության վերջին կրողն էր մեր քաղաքում, վերջին մոհիկանը: Բանտախցում հաց էր կիսել Վասյա Կորժի, Պաշա Ստրաժնիկի եւ Սվո Ռաֆի հետ (1):

– Մատաղ, մատաղ, դու լույս ես տալիս, քեզ սիրում է Աստված, ինչպես ինձ, – գորովանքով մրմնջաց:

Խորհրդային բանտային գեհենը ծայրեծայր դեգերած, անհավատալի փորձությունների ենթարկված ու մարդ մնացած մարդն իրավունք ուներ այդպես կարծելու: Ես խնդրեցի պատմել նրան իր կյանքից մի ուշագրավ դրվագ:

– Կպատմեմ սառնարանի մասին, – ասաց նա ու սուզվեց հիշողության բավիղները: Մի պահ քար լռություն տիրեց: Ինձ թվաց, թե բյուրավոր պապանձ հոգիներ պատրաստ սպասում էին նրա խոսքին: Խոսելու ճիգ նշմարվեց նրա դեմքին: Կարծես ճգնում էր քաշել ծանրածանր, թանձր մի վարագույր՝ երկաթե վարագույր:

– Գնացքը փնչալով գնում է դեպի արեւելք: Հեռավոր արեւելք: Ապրանքատար շարժակազմն էտապով տեղափոխում էր կալանավորներիս՝ վեց հարյուր հոգու: Յուրաքանչյուր վագոնում վաթսուն հոգի ենք: Քարածխի վառարանի շուրջ խմբված, տարբեր տարիքի, տարբեր ազգության մարդիկ են՝ լուռ ու մռայլ: Կարճատեւ երթից հետո շարժակազմը հանվում է հիմնական ուղուց ու մտցվում փակուղի՝ ճանապարհ տալու եկող շարժակազմերին: Բազմօրյա, հաճախակի փակուղային դադարներով երթը դարձել էր ձանձրալի, անտանելի: Հերթական դադարի ժամանակ հանդգնեցի վագոնի վերին մասում օդափոխության համար նախատեսված բաց ճեղքից դուրս նայել: Մեր սար ու ձորերի նման լեռնոտ, անտառապատ տեղանք էր, վերակացու՝ ավտոմատավոր զինվորների դաժան հայացքներ:

Հոգոց հանելով, վառելով հերթական սիգարեթը՝ ծերունին շարունակեց.

– Քիչ անց շրխկոցով բացվեցին դռները: Շերտավոր հագուստիցս ճանաչեցին միանգամից ու վրա պրծնելով դուրս նետեցին գնացքից: Չիտայում եմ:

Ձմեռ էր: Ինձ նետեցին շարժակազմի մեջ գտնվող պատժավանդակ: Ճաղավանդակը խիտ ցանցկեն էր, եւ ջրաշիթը միանգամից առաջացրել էր սառցե վանդակ: Սարսափով մտածեցի՝ սա վերջն է: Սառնամանիքն ածելու շեղբի պես թափանցում էր: Խելագարության հասնող անհույս վիճակս մղում էր շարժվելու: Շուտով ուժերս սպառվեցին: Ծնկեցի, եւ կզակս զարնվեց սառցե հատակին: Գիտակցությունս կորցրի…

Մարդը մի պահ լռեց, հետ նստեց, բարձրացրեց իր սերնդի շրջանում այլընտրանք չունեցած հնաոճ կեպկայի հովանին եւ շարունակեց:

– Երբ օրեր անց գնացքը հասնում է Ուլան-Ուդե, եւ տեղափոխող անձնակազմը ստուգայց է կատարում, ինձ նորից են հիշում: Սառած, փայտացած գտնելով ու համարելով մեռած, ինձ քարշ են տալիս սառնարանից դուրս եւ զեկուցում պետին: Կազմվում է արձանագրություն մահվան հերթական փաստի կապակցությամբ ու ներկայացվում ստորագրության ուղեկցող անձնակազմին: Բոլորը ստորագրում են, բացի երիտասարդ բժշկից, ով պնդում է տեղում զննելու եւ համոզվելու անհրաժեշտության մեջ: Հանձնաժողովականները ծիծաղում են եւ սկսում ձեռ առնել անփորձ բժշկին:

– Ստալինյան մարդակեր գայլերը,– իր պատմությունը շարունակեց ծերունին, – շատ լավ գիտեին, որ մարդն այնտեղից կենդանի չի պրծնում: Ես ոչ առաջինն էի, ոչ՝ վերջինը: Համառ երիտասարդը (ով հետագայում պատմեց ինձ այդ ամենը) պահանջում է զննում: Եվ ո՞վ զարմանք. նրա տոնոմետրն արձանագրում է աշխատող սրտի դանդաղ զարկերը:

– Նա կենդանի՞ է, նա կենդանի՞ է, – բղավում է նա:

Արդեն նետելու պատրաստ՝ պարկի մեջ տեղավորված փայտացածիս տեղափոխում են նույն վագոն, հրահանգում վառարանից հեռու պահել եւ ծածկել լաթ ու շորով:

Նա նորից մի ծխախոտ վառեց, կուլ տվեց ծուխն ու անհամբեր մանուկի պես շտապեց պատմել առանց արտափչելու: Պատմվող խոսքի հետ ինքնաբերաբար արտամղվող ծուխը, բաց վառարանի բերանից ելնող ծխի նման տարածվելով, շարունակեց.

– Օրեր անցան: Սկսեցի ձայն լսել՝ կարծես անդունդից: Այն կամաց-կամաց հստակվում էր: Սկսեցի շարժվել:

– Արթնացա՞վ, արթնացա՞վ: Նա կենդանի՞ է, – վրա պրծան տառապյալ մարդիկ ու սկսեցին շոշափել՝ կարծես համոզվելու համար իմ ողջության մեջ:

Ամուրի Կոմսոմոլսկում ինձ տարան բանտային հիվանդանոց, որտեղից դուրս գրվեցի տասնութ օր անց:

– Աստծո ցավը տանեմ, ասում եմ, չէ՝ սիրում է ինձ, այլապես այստեղ չէի լինի, – ասաց նա ու բարձրաձայն քրքջաց.

– Աշխատում էինք ուսսուրական տայգայում: Անտառ էր՝ անեզր, անսահման: Փակված անտառի հսկա բացատը շրջափակված էր դիտաշտարակներով: Անտառ ենք հատում: Յուրաքանչյուրն իր կտրած ծառը փոքրահասակ ձիով քարշ էր տալիս կուտակավայր: Տարածքը խստորեն հսկվում էր գոտիավորված կերպով: Հաղթահարեցիր մեկը՝ կբռնվեիր մյուսում: Թեեւ փորձերն ավարտվում էին ձախողմամբ, այնուամենայնիվ, շատերն էին փորձում փախչել: Ի՞նչ ուներ կորցնելու քսանհինգ տարի դատապարտվածը:

Նրանք նախապատրաստվում էին երկար. նախ, ժամանակի ընթացքում աննկատ փորում էին գետնափոր թաքստոցներ: Այնտեղ կուտակում էին խնայված սնունդ, լուցկի, ջուր: Կուտակված պաշարը թույլ էր տալիս մի քանի օր պատսպարվել: Երբ անհետանում էին, սկսվում էր տենդագին փնտրտուքը հարակից տարածքներում: Չգտնելով՝ համակերպվում էին փախուստի մտքի հետ եւ դադարեցնում փնտրտուքը:

Ամենակուլ տայգայի թավուտները շատերին են կլանել: Մի անգամ, – ոգեւորված շարունակեց զրուցակիցս, – վերակացուներն անտառի խորքում ծուխ են նկատում: Շրջապատելով տարածքը՝ ձերբակալում են մի փախստականի, ով սպանել էր ընկերոջն ու կերել նրան: Բերեցին ու բոլորին ի տես ծառից կախեցին փափուկ մսերից զրկված սպանվածին: Թե ինչ եղավ ինքը՝ մարդակերը, անհայտ մնաց:

Մի պահ լռություն տիրեց:

– Դե լավ, մատաղ,-վրա բերեց ծերունին. – Ծիխի կաց, ես գնամ:

Նրան ուղեկցեցի մինչեւ դարպաս: Ձեռքս սեղմեց, բարի գիշեր մաղթեց ու անէացավ խավարի մեջ, ողբերգականորեն դժբախտ իր բախտակիցների նման:

Անցան ամիսներ: Խորհրդավոր մարդու կյանքի ոդիսականը հանգիստ խռովել էր: Հաճախ էր պատկերանում հայացքիս առաջ: Նրա անսովոր դիմախաղը, ենթամշակութային խոսքի երանգները, պատմելու անզուգական ոճը, անսահման անկեղծությունն ու պարզությունը հանգիստ չէին տալիս ինձ: Ես նման էի այն հնագետին, ով գտել էր խորհրդավոր պարունակ, եւ մղումը՝ բացել այն, արդեն անկասելի էր:

Հին տոմարով Ամանորին այցելեցի նրան: Շատ ուրախացավ ու փութով հրավիրեց նստել արդեն բացված փոքրիկ սեղանի շուրջ (ծերուկն այնքան էլ վատ չէր ապրում. տարատեսակ օղիների, կոնյակի շշերի կողքին կեցած ուներ անգամ շոտլանդական վիսկի՝ բոլորն էլ կիսով չափ լիքը, ակներեւաբար, «գրեվը» նրան եւս չէր շրջանցում. մրգերի, ուտեստների պակաս չուներ): Նախընտրածս խմիչքը լցրեց, իսկ ինքը նախընտրեց օղին: Բարձրացրեց բաժակը, հանդիսավոր դիրք ընդունեց ու ասաց.

– Այսօր բաղում, վաղը՝ հողում: Ողջույն մեզ: Աստծո կենացը:

Խմեց, պարպված բաժակը հանդարտորեն վայր բերելով, ասես մոռացած այն սեղանին հանձնելու հարկը, հեղուկի դառնությունից եւ ուտեստի պապակից կկոցած աչքերում անհուն կարեկցանք ու թախիծ, շարունակեց.

– Բայց շատ ա էլի տուժված մեր Աստուծը, չէ՞, ախպեր: Ձեռքերը մեխա՞ծ, ոտքերը մեխա՞ծ, փուշ ու արյո՞ւն…

Ասաց ու բաժակը վայր դրեց՝ տանջողների հասցեին մրմնջալով իր աշխարհում ընկածներին տրվող հայտնի մի որակում:

– Դժգոհ չեմ ոչնչից: Աստված էլ է ինձ սիրում, ժառանգներս էլ, ախպերությունն էլ: Ոչ մի բանի կարոտություն չունեմ: Ինչ կյանքով ապրել եմ, այնպես էլ ապրում եմ:

Ակնարկելով որոշ հեղինակությունների կողմից հովանավորվելու իրողությունը՝ այդ ամենը համարեց իր վաստակի գնահատական, որի մեջ, իհարկե, համարում էր նաեւ խառը Աստծո մատը: Արագ վեր կացավ՝ շրջվելով դեպի տան խորքը, խնդրեց հետեւել իրեն: Անցանք փակ պատշգամբը:

– Ահա՛, տես: Ես Իր ցավը տանեմ, Ինքն է ինձ բերել ու հասցրել էս պահը (2015-ի հունվարի 13-ն էր): Դա անհնարին կլիներ, եթե չլիներ Ինքը: Ասաց ու հայացքը հառեց պատշգամբի անկյունին, որտեղ կախված էին բազում սրբապատկերներ, խաչեր ու մոմակալներ: Երկու լղարիկ մոմ մեկնեց ու հորդորեց վառել: Ակնածանքով վերցրի, տնկեցի կոլայի՝ ավազով լիքը թիթեղյա բանկայի մեջ, որը դրված էր անկյան փոքրիկ սեղանին ու վառեցի: Նա գոհացած շունչ քաշեց եւ հրահանգեց վերադառնալ սեղանի շուրջ: Պատշգամբի ու սեղանատան միջեւ ննջարանի դիմահայաց պատի առաջ ակամա կանգ առա. հնաոճ շրջանակներում եւ առանց դրանց բազմաթիվ լուսանկարներ էին համրորեն նայում՝ պես-պես տարազներով:

– Ծնողներս, հարազատներս ու տոհմակիցներս են, – ծանուցեց խանդաղատագին ելեւէջով եւ թաքնված հպարտությամբ ավելացրեց.

– Հիսունց է մեր տոհմը, եւ դա, չծիծաղես, ինձ փրկել է հաճախ:

Երբ տեղավորվեցինք, սեղանի պռնկին դրեց գունավոր լուսանկարների մի տրցակ եւ, իմիջիայլոց, նետեց.

– Նայի՛ր, երեխաներս, թոռներս, ծոռներս են,-ասաց ու ծոցագրպանից հանեց շագանակագույն թղթե փոքրիկ փաթեթը: Սկսեցի անշտապ դիտել ու քաղաքավարությունից դրդված հարցնել, թե ով ով է: Ակամա հայացքը հեռացնելով աշխատող ձեռքերից, քնքշագին նայում էր նկարին, պատասխան տալիս ու փութով շարունակում բաղձալի տենչով ծանրաբեռ: Լուսանկարներից մեկը գրավեց ուշադրությունս: Գեղեցկադեմ, հերարձակ լանջաբացվածքով՝ երեսունին մոտ, ժամանակակից հագուկապով կին էր: Իսկ երբ նա գոցեց պոչավոր թղթի բերանը, պարզեցի նկարն իրեն ու հարցրի կտրուկ.

– Ո՞վ է:

Չարաճճի ժպիտ խաղացնելով՝ ինքնավստահ, սատանայի ծխի քուլաների միջից արտաբերեց.

– Սիրա՛ծս է: Ասաց ու շարունակեց.

– Շատ-շա՜տ՝ ապրենք հարյուր տարի…սրանից հետո, – փոքր-ինչ դադար տալուց հետո շարունակեց. – մեկ է՝ մենք չենք լինելու: Կարո՞ղ ես՝ վայելիր:

Ցանկանալով նրան բերել ընդհատված զրույցին՝ հարցրի.

– Ի՞նչ եղավ սառցավանդակից եւ ուսսուրական տայգայից հետո, խնդրում եմ, պատմիր:

Նրան ակնհայտորեն դուր եկավ թախանձանքս, եւ պատրաստակամ, բայց թախծոտ տոնով ասաց.

– Շատ վատ եղավ, եղբայր, վատը կարգին բան է, ուղղակի հայտնվեցինք դժոխքում: Արդեն հստակ էր, որ մեր՝ անտառահատների ճանապարհը փակվելու է: Ըստ պահանջագրերի՝ փոքր էտապներով հարյուրավոր դատապարտյալներ էին առաքվում ցրտաշունչ հեռուներ (ամենուրեք՝ ձյուն, ձյուն. քայլում ես կիլոմետրերով, տասնյակ կիլոմետրերով՝ տեսադաշտումդ՝ բոլոր կողմերի վրա՝ սպիտակ է ու՝ անասելի ցուրտ: Այդպես է տարվա մեծ մասը: Ու եթե որեւէ շինություն էլ լինի, ասենք, անտառապահի խրճիթ, միայն հնարավորինս մոտենալով կարելի է տարբերել նրա հազիվ նշմարելի պատկերը՝ ձյունի տակ կքած. կամ էլ կարող ես դեմ առնել հուսահատ փախուստի ճանապարհը բռնած, սառած-անշնչացած մեկին, ով ոչ հեռու անցյալում դոկտորական ատենախոսությունն էր պաշտպանել ու վայելել հեռանկարային գիտնականի համբավը):

Այդ ամենն ուղղորդում էր ԳՈՒԼԱԳ-ը: Միլիոնավոր մարդիկ էին թարմ հոսանքով ցրվում անթիվ ճամբարներ, որտեղ մրջյունների պես բանում էին ու մարում ցրտից, սովից, կտտանքներից, հիվանդություններից ու բազում զրկանքներից:

Վերհուշի վշտից կկոցելով աչքերն ու տարուբերելով գլուխը, բթամատը ցուցամատի ծայրին հպելով, անորոշ հայհոյանք հղելով, ասաց.

– Ա՜յ, էսքան՝ մի ճանճի արժեք չուներ մարդն էդ երկրում:

Փակվում էր մեր ճամբարը: Հատուկ հանձնաժողովը, բժիշկներով հանդերձ, տեսակավորում էր ճամբարականներիս՝ ըստ պիտանելիության: Առաջինն ինձ խոտանեցին: Առաջին պատժաչափիս ժամանակ, որի մասին հետո կպատմեմ, խոշտանգումից ջարդվել էր ձեռքս ու ծուռ էր կպել: Պիտանի չէի ծանր աշխատանքի: Երկրորդն օրենքով գող «Տոլիկ Ցիպլյատան» էր: Եվ այդպես շարունակ: Հատուկ գնացքով մեզ հասցրին Պորտ Վանինո: Դա մի փոքրիկ քաղաք էր՝ Սախալին կղզու դիմաց, ճապոնական ծովափին: Քառասուն հազարանոց ճամբարը լծված էր մի աներեւակայելի դժվար աշխատանքի: Քաղաքի դիմաց փոքր ցամաքալեզվակով կղզու ծովափին, լեռան մեջ ռազմական օդանավակայան էր կառուցվում: Փորում էին լեռան ընդերքը՝ ապարը հանձնելով ծովին: Պատժի ու մահվան սարսափով, մարդկային մրջնանոցն անդուլ բանում էր, հորատում, բետոնապատում, ավելի խորը մխրճվում դիվական խորքը: Ապարատար վագոնների դղրդյունի, ցեխի, ջրի ճռռփյունի, քլունգների ու մուրճերի համազարկերի, փլուզումների ու քարաթափերի գեհենում կյանքի ու մահվան երգն էր վրնջում: Իսկ դրսում, ուր մոլեգնում էր քամին, մարդիկ կառչում էին հատուկ կապված պարաններից, տեղաշարժվելու եւ հողմից չշպրտվելու համար: Յուրաքանչյուր աշխատանքային օրը համարվում էր երեք օր, մեկ տարին՝ երեք տարի: Քչերին էր բախտ վիճակվում դուրս պրծնել մահվան չարագուշակ այդ զնդանից: Հատկապես անհույս էր Երկրորդ աշխարհամարտում գերի ընկածների, 58-րդ հոդվածով դատվածների վիճակը: Նրանց բերում, մաղում էին, տեսակավորում, վերախմբավորում: ԿԳԲ-ի գիշակերները քրքրում էին յուրաքանչյուրի գործը. որտեղ է գերի ընկել, ով է եղել հրամանատարը, ինչ է արել գերության մեջ եւ այդպես շարունակ: Նրանք, ովքեր իրավունք չունեին ապրելու, մասսայաբար մահացու թունավորվում էին ճաշին: Քրեականներիս էր վերապահված մեռածներին բեռնատարները բարձելու եւ էքսկավատորներով փորված ուղղաձիգ, երկար փոսերը լցնելու գործը: Լցնում ու տոփանում էին՝ չթողնելով ոչ մի հետք: Իսկ քրեականների համար կար հատուկ

թաղման վայր: Մի քանի շարքով՝ կիլոմետրերով ձգվող լարերի վրա ամրացված երկաթե թիթեղիկներին մահացածի գործի համարն էր, անունը, ծննդյան ու մահվան թվականները: Իսկ երբ փչում էր քամին, պողպատե թիթեղիկները կարծես հոգեհանգստյան մեղեդի էին մրմնջում:

– Բա չես ասի՝ ինչ եղան մեր ճամբարի մյուս կալանավորները, – էլի անհասցե հայհոյանք հղելով՝ շարունակեց.

– Ուրեմն «Коробка» կոչվող եռահարկ նավը, որի ստորին երկու հարկերը կահավորված էին որպես բանտ, նախատեսված էր կալանավորներ տեղափոխելու համար: Վերին հարկում տեղափոխող ու սպասարկող անձնակազմն էր: Պորտ Վանինոյից նրանք շարունակում են ճամփան դեպի Մագադան: Նրանց մեջ գլուխ ունեցող մարդիկ կային է՞, գիտե՞ս ի՞նչ մարդիկ, – ծոր տվեց ծերունին ու շարունակեց. – Ճաշ բաժանելու ժամանակ, երբ շրխկոցով բացվում էր փոքրիկ դռնակը, եւ խոհարարները պիտի ներս փոխանցեին կերակուրը, շրխկոցով, իբր ուշագնաց, վայր է ընկնում մի կալանավոր: Դռնապաններն արագ բացում են դուռը՝ դուրս քաշելու ընկածին: Իսկ նրանց հենց այդ էր պետք. վրա են պրծնում, զինաթափում դռնապաններին, դուրս հորդում՝ նրանց փակելով երկաթե զնդանում: Անաղմուկ բացում են մյուս բոլոր դռներն ու ելնում տախտակամած: Զինաթափելով բոլորին՝ գրավում են նավը եւ ուղղվում դեպի Ամերիկայի ափերը: Այնուամենայնիվ, վերակացուներից մեկին հաջողվել էր տագնապի ազդանշան տալ: Ձեկուցվում է Մոսկվա, որտեղից ստացվում է հրամանը՝ խորտակել նավը: Հուսավառ մարդկանց երթը կասեցնում են օդ բարձրացած ռազմական ինքնաթիռները՝ բոլորի հետ ծովի խորքերն ուղարկելով նաեւ տագնապ հնչեցրած անմիտ վերակացուին...

Այդ մասին ծածուկ պատմում էին բարաքներում, փայտաշեն, գաղջ, մահահոտ թոհուբոհում:

Նա թախանձագին նայեց աչքերիս ու նետեց.

– Բեր՝ չպատմեմ, էլի՞, ինչո՞ւ ես հիշեցնում: Բայց հանդիպելով աննահանջ կեցվածքիս, շարունակեց.

– Ամբողջ գաղութը շրջապատված էր փշալարե պարսպով ու դիտաշտարակներով: Հարյուրավոր միահարկ բարաքներ, թեեւ շարված էին կողք-կողքի, բայց մեկուսացած էին եւ ունեին առանձին մուտքեր: Յուրաքանչյուր բարաք իր հերթին ներսից բաժանված էր 60-70 տեղանոց հատվածների, որոնցից յուրաքանչյուրը կազմում էր մեկ բրիգադ: Բարաքում մշտապես հերթապահում էր մեկը, ով մաքրում, սրբում էր, հետեւում վառարանին ու ջուր կրում: Ամեն մի բրիգադ ուներ իր աշխատանքային տեղամասը, որ գտնվում էր մեկ կիլոմետրի վրա: Նախաճաշն ու ընթրիքը տրվում էին բարաքում, ճաշը՝ աշխատատեղում: Անզեն հսկիչներն ամեն օր մտնում էին բարաքները, ստուգում ու հաշվառում: Կարգազանցները հայտնվում էին տուգանային բրիգադներում БУР եւ ЗУР (барак усиленного режима եւ зона усиленнего режима) եւ մեկուսարաններում: Գաղութն արտաքնապես էր միասնական: Այն բաժանված էր գոտիների, եւ յուրաքանչյուրը մի ուրույն աշխարհ էր՝ առանձնացված ու մեկուսի: Համակեցությունն անհնար էր, այդ աշխարհում գործում էին մարդկային վարքուբարքի տարբեր ընկալումներ ու դրսեւորումներ (масть), որոնք իրար հակոտնյա էին ու թշնամի: Երբ գալիս էր էտապը, ամեն ոք հայտնում էր իր մաստը եւ ներառվում համապատասխան зонում: Սխալ ընտրությունը հավասարազոր էր մահվան: Կար յոթ масть: Առաջինը՝ хули нам, անտարբերներն էին: Այսինքն՝ անտարբերություն ամեն ինչի նկատմամբ. սրանք չէին ենթարկվում ոչ-ոքի՝ չընդունելով նաեւ գողերին ու գողականը: Երկրորդը лом подпоясный-ն էր. սրանք այն ընբոստներն էին, ովքեր ապավինում էին բիրտ ուժին ու դագանակին: Երրորդը красношапочники կոչվողներն էին՝ երբեւէ ծառայած եւ ուսադիրներ կրածները: Չորրորդը գողերն էին: Համարյա ամեն բրիգադում գող կար: Նրանք վերահսկում էին միջանձնային հարաբերություններն ու կարգուկանոնը, պաշտպանում յուրայիններին ուրիշների ոտնձգություններից: Հաջորդը՝ суки, այսինքն՝ բ-րը: Եթե նրանցից մեկը հայտնվեր կամ բացահայտվեր այն зон-ում, որտեղ գող կար, պետք է անպայման սպանվեր, այլապես իշխողը կզրկվեր տիտղոսից: Հետո գալիս էր честные мужики անձանց խավը, որը ենթարկվում էր գողերին ու ապրում նրանց հետ: Եթե կար առաջինը, կար նաեւ երկրորդը: Եվ, վերջապես, անողոք այդ աշխարհի հատակում педараст կոչվողներն էին՝ մերժվածների կաստան՝ ենթակա սեռական շահագործման, որոնք իրավունք չունեին օգտվել ընդհանուր ճաշարանից եւ կողից կախված ունեին ալյումինե թասեր:

Նկատելի աշխուժացած, համապատկերից էպիզոդիկ դրվագներ վերհիշելու այլեւս պատրաստակամ, զրուցակիցս շարունակեց.

– Նորեկների հագուստներն ու կոշիկները, որ մնում էին տրվող հատուկ հանդերձանքից հետո, տնօրինում էինք մենք: Դրանցից լավագույնները տրվում էին մոտալուտ ազատ արձակվողներին, մնացածը փոխանակում էինք լուցկու, մախորկայի, самосад-ի՝ ինքնատունկ ծխախոտի, օդեկոլոնի, թեյի… շան եւ այլ ուտելիքի հետ: Մի օր քրոմե սապոգների դիմաց մեր ասած տեղը կապած գտանք մեծ մի շուն: Մորթող էլ գտնվեց, բայց, այ, մորթազերծ անող չկար: Հանձն առա: Հիշում էի, թե ինչպես էր հայրս ոչխարը մաշկում: Կացնահար ու գլխատված կենդանուն կախեցի ծառից, թեւքերս քշտեցի ու սկսեցի մաշկել: Կողքին վառված կրակի վրա դույլի մեջ տաքանում էր ջուրը, իսկ երբ ճեղքեցի որովայնն ու փորոտիքը վար էի քաշում, անհանգիստ խլրտոց լսվեց: Հանկարծակիի եկած «հանդիսատեսները» ոտքի կանգնեցին: Բարձրացրի գլուխս, մի պահ քարացա: Հետո բնազդաբար շարունակեցի գործս՝ հայացքս մերթընդմերթ նետելով անսպասելի ու վտանգավոր «հյուրերի» կողմը: Բարձրաստիճան զինվորականներ էին՝ բարձր պաշտոնյաներ, ոմանք գեներալական լամպասներով, ոմանք՝ ցիլինդրներով: Անսպասելի ու անսովոր տեսարանից ապշահար, մի պահ կանգնեցին, հարցրին բրիգադի համարն ու հեռացան: Իսկ երբ աշխատանքից վերադարձած բրիգադի անձնակազմի առաջ փայտով հարթված ձյան վրա նրանց քանակին համապատասխան կտրտված ու եփված միսը դույլից թափեցի, նրանց չարագուշակ տեսքը կրկին հայտնվեց աչքերիս առաջ: Վտանգ զգացի: Այս շան նման ինձ էլ կտոր-կտոր կանեն, անցավ մտքովս: Առաջինը վերցրի կրծքի հատվածից յուղոտ մի կտոր եւ սկսեցի ուտել: Մնացածը, ասես տոնական տրամադրությամբ, աշխույժով մոտենում էին ձյունե սեղանին, վերցնում իրենց բաժինը, կողք քաշվում եւ ըմբոշխնում: Հազիվ էի կուլ տվել բաժնիս վերջին պատառը, երբ սառը օդը թրատելով, պողպատաձայն հնչեց անուն-ազգանունս: Ակամա յուղոտ ձեռքերով սղալեցի դեմքս ու աչքերս: Ձեռքերս առած մեջքիս, կառափնարան մեկնողի պես վերակացուի առաջն ընկա: Իսկ երբ ուղղվեցինք բարձունքում գտնվող լայն պատուհաններով, բոլոր կողմերից տեսանելի գորշ ու մռայլ շենքի կողմը, սարսուռս սահուն փոխակերպվեց դողի: Քիչ հետո բացվեցին գաղութի պետի աշխատասենյակի դռներն, ու ներս հրեցին ինձ: Մտա: Ընդարձակ սենյակում, կոքսի մեծ վառարանից քիչ հեռու սեղանի շուրջ նստած էին նույն պաշտոնյաները: Ինչ ասես՝ կսպասեի նրանցից, բացի նրանից, ինչ տեղի ունեցավ: Ինձ տեսնելով՝ նրանք սկսեցին անզուսպ քրքջալ ու աշխույժ իրար նայել: Երբ հանդարտվեցին, սեղանի վերին մասում նստածը տիրական ձայնով ասաց.

– Տղա՛ս, մոտ արի:

Երբ մի քանի քայլ մոտեցա, նորից սկսեցին հռհռալ: Շփոթահար, անհանգիստ երբ աջուձախ նայեցի, նրանցից մեկը ցույց տալով պատից կախված հայելին, ասաց.

– Մոտեցիր հայելուն ու նայիր քեզ:

Համարյա հիպնոսացած մոտեցա ու... սկսեցի ծիծաղել: Ինձ թվաց, թե սենյակը հիմա կպայթի ներկաների նորից ծայր առած հուժկու ծիծաղից: Հայելու մեջ ես չէի կարծես, այլ վարպետորեն շպարված խեղկատակ: Շան ճարպն ու ճրագուն, երբ յուղոտ ձեռքերով սղալել էի քիթ-մռութս ու աչքունքս, սառել էին դեմքիս, քամին ու փոշին էլ իրենց գործն էին արել՝ հարդարելով վերջնականապես: Ձվարճալի տեսքիս հետ ահն էլ, կարծես, չքացավ:

– Ո՞վ ես դու ազգությամբ, – հարցրեց տիրական ձայնը:

– Ձերոնցից, – երկմտանքով ասացի ես:

– Չէ՛, ասա կոնկրետ, – պահանջեց խստաձայն:

– Հայ եմ,-ասացի:

Աշխուժություն ալիքվեց: Նա հաղթական հայացք նետեց աջուձախ ու բարեկամաբար ասաց.

– Ես էլ հայ եմ: Տեսնելով քեզ՝ հասկացա, որ դու էլ հայ ես: Չհավատացին ինձ ընկերներս: Ես ճիշտ դուրս եկա: Իսկ կոնկրետ որտեղի՞ց ես:

– Զանգեզուրից:

– Ավելի ստո՞ւյգ,– կարծես հետաքրքրությունը շարժեցի:

-Գորիսի՛ց;

– Ա՛, ազգականիս եմ գտե՛լ... – բացականչեց նա, մոտեցավ, գրկեց ինձ ու սեղմեց կրծքին;

– Ես շուշեցի եմ, – ասաց, – հայրս սայլապան էր եւ հաճախ էր գալիս ձեր կողմերը: Մի անգամ էլ ինձ առել էր հետը:

Որոշ հարցուփորձից հետո, ինձ հորդորեց կարգապահ մնալ, շուտափույթ ազատ արձակվել ու լծվել խաղաղ աշխատանքի:

– Ինձ, երբ կարգի կգաս, կուղղվես, կարող ես գտնել այս հասցեով:

Ձերմորեն սեղմեց ձեռքս եւ ներս մտած վերակացուին կարգադրեց ինձ ուղեկցել բարաք:

Նա ԽՄԿԿ Խաբարովսկի երկրամասի երկրկոմի առաջին քարտուղարն էր՝ Տուշմալյանը, ով եկել էր մեր՝ Շինարարություն N 508-ը՝ շինարարական շրջանի վարչության պաշտոնյաների հետ:

Ազատազրկման ժամկետիս ավարտին մնացել էր երեք օր: Պատրաստ հագուկապուստս անկողնիս մոտ կախված էր պատից: Շորերիս մեջ հատկապես աչք էր շոյում կաշվե ճապոնական շագանակագույն մի բաճկոն, որը գնել էի լենինգրադցի կալանավոր օդաչուից եւ չտեսնված բան էր: Անկյունս զարդարված էր նաեւ բանտային արվեստի գործերով՝ մերկ, կիսամերկ գեղեցկուհիներով: Գաղութի ռեժիմը ստուգելու եկած մի հանձնաժողով հայտնվում է մեր բարաքում՝ անկողնիս մոտ: Օրապահը զեկուցում է ու հայտնում, որ այդ ամենը պատկանում է ինձ եւ որ շուտով պիտի ազատվեմ: Եկան, կանչեցին: Ուրախացա՝ մտածելով, որ պատրաստվում են ազատ արձակել: Անխոս երկու մռայլ վերակացու գաղութի բանտի դուռը տարան:

Ընդհատելով խոսքը՝ զրուցակիցս ձեռքն առավ ծխախոտի տուփը, մի գլանակ հանեց, հետ նստեց ու սկսեց երկու ձեռքերի ցուցամատի ու բթամատի արանքում պտտեցնել այն ու լռեց: Ասես մոռացել էր իմ մասին, սովորականի պես սուզվել ապրած կյանքի փոթորկահույզ խորքերը: Անհանգիստ շարժումով խոր շունչ քաշեց ջրից դուրս պրծած լողորդի նման, աղերսալի ու կշտամբական հայացքը մեխեց աչքերիս ու վրա բերեց.

– Ախպեր, ինչի՞ ես հիշեցնում, բեր՝ չպատմեմ, էլի:

Բայց երբ աննահանջս չարձագանքեցի, վառեց ծխախոտն ու շարունակեց:

– Ներս տարան ու նետեցին ընդհանուր պատժախուց: Ուրախ ճիչ-աղմուկով մի քանի հոգի մոտեցան, գրկեցին, ձեռքս սեղմեցին ու սկսեցին հարձուփորձ անել: Ուսսուրական ճամբարի բախտակիցներս էին, որոնք ճանաչել էին ինձ: Ասացի, որ այստեղ հայտնվելուս պատճառը չգիտեմ, որ երեք օր է մնացել ժամկետիս ավարտին: Բաժանեցի ունեցածս մախորկայից, ու վերհիշեցինք դեպքեր անցյալից: Ի դեպ, «Коробка»-ի պատմությունը հենց այստեղ լսեցի: Որոշ ժամանակ անց ինձ դուրս տարան ու հրեցին փոքր մի սենյակից ներս: Երեք բանտայիններ էին ներսում՝ դաժան, ապակեփայլ աչքերով: Թղթեր հանեցին, կարդացին ու պահանջեցին ստորագրել: Գրված էր, որ իբր բռնությամբ հագուստներ եմ խլել, մարմնական վնասվածքներ հասցրել, վնասարարությամբ զբաղվել: Յուրաքանչյուր բարաքում նրանք ունեին գործակալ մատնիչ-զրպարտիչներ, ովքեր կեղծ վկայել ու ստորագրել էին: Հրաժարվեցի ստորագրել: Հրեշները վրա պրծան ու կոխկրտեցին: Արյունլվա, կիսամեռ ինձ քարշ տվին բանտի խորքը: Դղրդոցով բացված դռնից ներս նետեցին ու փակեցին: Ցավը երկար գալարեց ու գամեց գետնին: Անորոշ ժամանակ անց գիտակցության եկա: Պղտոր հայացքս դանդաղորեն սկսեց ընկալել շրջապատը: Առանց ապակու, ճաղապատ, բարձրադիր պատուհանից հորդող լույսն ու օդն ուշքի բերեցին ինձ: Շրջապատն ապականված էր մարդկային կղանքով: Դիմահայաց պատի տակ, երկաթե հարթակին ամբողջովին մերկ, մազ-մորուքի մեջ կորած, ածխի պես երկու մարդ էր կծկված: Գունդուկծիկ երկու արարած էլ ընկած էր մյուս անկյունում: Բոլորն էլ համակ ուշադրությամբ հետեւում էին ինձ՝ բեմ նետվածիս: Ընդարմացած, ոտքս հազիվ ուղղելով, ձեռքս մի կերպ խոթեցի վարտիքիս գրպանը, հանեցի самосад-ը, փաթաթեցի, վառեցի ու սկսեցի ծխել: Անկյունի գունդուկծիկը սկսեց շարժվել ու բացվել: Կոտրված ու ծուռումուռ կպած ձեռուոտով թշվառները սողացին դեպի ինձ ու երկչոտ հայացքով ծխախոտ աղերսեցին: Նրանց համար էլ փաթաթեցի: Ու երբ բերաններն առան ու վառեցի, եւ ծխաց խոտը, անմիջապես հետ քաշվեցին՝ ասես վախենալով կորցնել բաժին հասած՝ տենչալի բարիքն ու հետնաքարշ անկյուն մղվեցին: Մի տեսակ անիրական թվաց այդ ամենը՝ արթո՞ւն եմ, թե՞ քնած, իրականությո՞ւն է, թե՞ մղձավանջ: Իսկ երբ քարացած թարթիչներս ու սեւեռված հայացքս պղտորվեց, ու դեռ ստույգ չէի պարզել իրականի ու անիրականի թնջուկը, ուժգին հրոցով տապալվեցի գետնին: Մոլեգին շնչով կատաղի մարդն ակնթարթորեն պատռելով հետ քաշեց օձիքս ու սուր ատամները խրեց ուսիս մեջ եւ աննկարագրելի թափով պատառ պոկելով, ընկրկեց ու սկսեց ծամել: Հանկարծակիի եկած, արյունաբերան հրեշի տեսքից սարսափած, սկսեցի գոռալ, օգնություն կանչել: Արձագանքը քարացավ ու լռեց: Թեւս ու կողս ավելի ու ավելի էին թրջվում ու ջերմանում: Մերկանդամ մարդակերը ծամե՞ց, ծամե՞ց երկար ու մի փոքր գունդ՝ մնացորդը թքեց իմ կողմը: Մյուսը՝ ընկերը, խոժոռը, լուռ դիտում էր: Դանդաղորեն վար իջավ երկաթե հարթակից, մոտեցավ ինձ ու նախատելով սկսեց ինձ օգնություն ցույց տալ: Պոկեց մի կտոր բամբակե հագուստիցս, վառեց, մնացորդով խարկեց վերքս ու կապեց:

– Ասացի՝ չպատմեմ, հազիվ մոռացել էի, – ասաց ու մանրիկ աչքերի խորամանկ խայտանքով ժպտաց: Ոտքի կանգնեց, արձակեց վերնաշապիկի վերին կոճակները եւ, որպես վկայություն, մերկացրեց դեպի վեր պարզած ուսը: Ընկույզից քիչ մեծ սպին, որպես ակնախորշում ծվարած կեղծ աչք, երեւաց ու թաքնվեց:

– Սա իմ սխալի հետեւանքն էր, կարող էր եւ չլինել: Ոչ թե մեկ, այլ երկու կոպիտ սխալ էի թույլ տվել: Երբ գիտակցության էի եկել ու նկատել նրանց, չէի բարեւել: Դե՝ բարեւիր, էլի՞, մարդ չե՞ս դու, խի՞ ես էդպիսի սխալ անում,-դատափետեց իրեն ու անցավ երկրորդ վրիպմանը:

– Երկրորդ սխալս այն էր, որ ծխախոտ էի հրամցրել անարժաններին, իսկ իրենց անտեսել: Մահվան այդ զնդանից, որտեղից ոչ ոք կենդանի դուրս չէր գալիս, դուրս պրծա հաջորդ օրը: Ահա թե ինչպես դա պատահեց. երբ ընդհանուր խցից ինձ հանել էին, ծանոթ բախտակիցներս պարզել էին, որ ոչ մի խցում ես չկամ. բանտային կյանքում վաղուց հաջողություն գտած՝ պատին հարմարեցվող երկաթե գավաթի (кружка) օգնությամբ կալանավորները կարողանում էին հաղորդակցվել: Հաջորդ առավոտյան նրանք հրաժարվում են սնունդ ընդունել: Պատահմամբ այդ օրը բանտ է այցելում բժշկական ծառայության գնդապետ Ագաֆոնովը: Լսելով բանտարկյալների գանգատը՝ նա կարգադրում է բանտի ղեկավարությանը զեկուցել: Ու նա պնդում է բացել բոլոր դռները: Հայտնվում է նաեւ մեր խցում: Զարմացական հայացքով չափելով բոլորին՝ պահանջում է ինձ դուրս տանել: Կարգադրեց ու հեռացավ: Երկաթե դուռը վնգստալով փակվեց՝ հետեւում թողնելով դժոխքը: Քիչ հետո նստած եմ նրա՝ փրկչիս առաջ: Պատմեցի ողջ եղելությունը: Հուսադրեց, ասաց, որ իր կինը հայուհի է, խոստացավ օգնել ու հրահանգեց ինձ տանել բանտային հիվանդանոց: Լողացրին ու նոր հագուստներ հագցրին: Հաջորդ օրն ինձ այցի եկավ նրա հայրենակարոտ կինը: Գուցե մայրակա՞ն, թե՞ ցեղային ամենակարող բնազդն էր նրան բերել բանտային խարխուլ հիվանդանոց՝ չնչին ու իրավազուրկ կալանավորիս ի տես: Նա գյումրեցի էր:

Մեկ շաբաթ հետո ազատ արձակվեցի, այդքան էլ հյուրընկալվեցի նրանց տանը: Ակնարկեցին մնալ, կոմերիտական հարսանիք կազմակերպել՝ ամուսնացնելով իրենց միակ դստեր հետ, մարդ դարձնել, բայց... արեւմուտքը կանչում էր: Խոստացա հարազատներիս հետ տեսնվելուց հետո ետ վերադառնալ: Մեկ ճամպրուկ գրքերով ու բավական կլորիկ գումարով ինձ ճամփու դրին: Տուն չհասած, մեկ շաբաթ հետո կրկին ձերբակալվեցի, դատվեցի ու... կրկին բանտ...

Ծանոթություն

1. Հայտնի օրենքով գողեր: ■

ՀՀ ԱԺ ընտրությունների թիվ 12 ընտրական տարածք (Սյունիքի եւ Վայոց ձորի մարզեր)

Թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողով

Հարությունյան Սարմիկ Գերասիմի -հանձնաժողովի նախագահ
Ստեփանյան Արմեն Վլադիմիրի-հանձնաժողովի նախագահի տեղակալ
Անդրեասյան Արտյոմ Մարատի-հանձնաժողովի քարտուղար
Մարկոսյան Օվսաննա Սամվելի-անդամ
Բաբայան Վազգեն Համլետի-անդամ
Մանուչարյան Կարեն Արտուշի-անդամ
Շահգելդյան Քնարիկ Ռազմիկի-անդամ

Թիվ 35 տարածքային ընտրական հանձնաժողով

Սարգսյան Սերգեյ Իլյայի-հանձնաժողովի նախագահ
Բալասանյան Յուրի Վարշամի-հանձնաժողովի նախագահի տեղակալ
Հակոբյան Ռամելա Աշոտի-հանձնաժողովի քարտուղար
Խաչատրյան Ռուզաննա Հրանտի-անդամ
Ազարյան Վազգեն Ռուշանի-անդամ
Ավետիսյան Աննա Վոլոդյայի-անդամ
Գեւորգյան Անահիտ Էմիլի-անդամ

Թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողով

Հարությունյան Աղվան Համլետի-հանձնաժողովի նախագահ
Առաքելյան Առաքել Միքայելի-հանձնաժողովի նախագահի տեղակալ
Հարությունյան Կարինե Կառլենի-հանձնաժողովի քարտուղար
Կոստանյան Արամ Աշոտի-անդամ
Դավթյան Հրանտ Գվիտոնի-անդամ
Ավետիսյան Սամվել Երջանիկի-անդամ
Աբրահամյան Գայանե Մյասնիկի-անդամ

Եկեք խոսենք հայերեն

էջ 3

«Գուշակիր մեղեդին» հաղորդումը): Այդպես էլ դժվար է հասկանալ «Չէին սպասում» եւ «Սոված չէին ապրում» հաղորդումների իմաստը, մանավանդ երբ այդ հաղորդումների մեջ ներառվում են հայրենիքը թողած-գնացածների շքեղ ավտոմեքենաներն ու առանձնատները, նրանց ընչաքաղցությունը, նյութապաշտությունն ու քաղքենիությունը փողհարող կադրերը: Հակված եմ մտածելու, որ նման ցածրորակ հաղորդումները եթեր են տրվում, որպեսզի հեռուստադիտողն անհամբերությամբ սպասի Գոհար Հայրապետյանի («ԱՊոլիտիկա»). Լեւոն Խորենյանի («Երգ-երգոց), Նազենի Հովհաննիսյանի, համարյա բոլոր քաղաքական մեկնաբանների հաղորդումներին: Երեւի:

Լեզվի մասին առաջին լեգենդը Բաբելոնի անհաջող աշտարակաշինության հետ էլ ավարտվում է: Երկրորդ լեգենդն այն մասին է, թե ինչպես Եգիպտոսի փարավոններից մեկը, որպեսզի որոշի, թե որ ազգն է առաջինը ստեղծվել աստծո կողմից, հրամայում է իր թագավորության տարբեր ազգերից ծնված մեկական նորածին բերել պալատ: Նրա հրամանով նորածիններին դայակություն են անում խուլ ու համր կանայք: Երեխաների հետ մյուս շփվողներին էլ մահվան սպառնալիքով արգելվում էր նրանց ներկայությամբ խոսել: Ըստ փարավոնի էքսպերիմենտի, որ ազգը ներկայացնող մանուկը առաջինը խոսել սկսի, նշանակում է աստվածները հենց նրա ազգն են ստեղծել: Անցնում են ամիսներ, մանուկները չորեքթաթ են տալիս, մեկ, մեկուկես տարի անց՝ նաեւ քայլում, բայց մարդկային լեզու չլսած երեխաներն այդպես էլ չեն խոսում:

Երեւի փարավոնի այս էքսպերիմենտն են աչքի առաջ ունենում առաջադեմ շատ երկրներ, երբ լեզուների ուսուցումը սկսում են նախակրթարաններից, համարյա մայրենի լեզվի հետ զուգահեռ: Մեզ մոտ էլ են սկսվել առաջին փորձերն այս ուղղությամբ: Տա Աստված, որ այն հաջողություն ունենա: Գուցե դա՞ է մայրենին այսօրվա տխուր վիճակից հանելու ճանապարհներից մեկը: Իսկ վերջում ցանկանում եմ բոլորիս մեկ անգամ էլ հիշեցնել մեծ հայուհու պատգամը՝ թե մորդ անգամ մտքիցդ հանես, քո մայր լեզուն չմոռանաս:

Մարզի ճանապարհների վիճակը վերահսկվում է

Ինչպես տեղեկացնում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ՀՀ տարածքում ավտոճանապարհները հիմնականում անցանելի են: Ըստ հաղորդագրության՝ Սյունիքի մարզում դժվարանցանելի են բոլոր ավտոճանապարհները, Սարավան-«Զանգեր» ավտոճանապարհներին բուք է, «Մեղրիի սար» կոչվող հատվածում առկա է մառախուղ:

Մարզի հատկապես միջպետական նշանակության ավտոճանապարհների մասին տեղեկություն ստանալու համար զրուցեցինք մարզի ճանապարհաշինական ընկերությունների ղեկավարների հետ:

«Սիսիանի ԲՈՒՍ» ՍՊԸ տնօրեն Տիգրան Անդրեասյանը հավաստիացրեց, որ ուժեղ ձյուն է սկսել տեղալ դեկտեմբերի 14-ի ժամը 17.00-ից: Մեր հեռախոսազրույցի պահին՝ դեկտեմբերի 15-ի առավոտյան ժամը 11-ի սահմաններում, դեռեւս Սիսիանի տարածաշրջանում շարունակվում էր ձյուն տեղալ: «Ոչ մի վայրկյան ճանապարհը չի փակվել: Համապատասխան տեխնիկան շարունակում է իրականացնել մաքրման, ավազի ցանման աշխատանքները: Սառնակունքից «Զանգեր» ընկած հատվածում բուք է, բայց ճանապարհներն անցանելի են, տեխնիկան անընդհատ իրականացնում է մաքրման աշխատանք, առայժմ անանցանելի հատված չունենք», – նշեց տնօրենը:

«Սիսիանի ՃՇՇ» ՓԲ ընկերության տնօրեն Հրաչ Գաբրիելյանը նշեց, որ իրենց պատասխանատվության գոտու ավտոճանապարհները բաց են եւ անցանելիությունն ապահովելու համար անընդհատ իրականացվում են աշխատանքներ:

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանը նշեց, որ ձյունն այս պահին (դեկտեմբերի 15-ին՝ ժամը 11-ի սահմաններում) դադարել է: «Տեղացել է մոտ 30 սմ ձյուն, տեսանելիությունը բավարար է՝ 40-50մ: Շուրջօրյա հերթապահության շնորհիվ ճանապարհները մաքրված են, մշակված, նույնիսկ սառած հատված չունենք», – նշեց Ազատ Գասպարյանը:

«Ոսմար» ՍՊԸ տնօրեն Արթուր Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ Գորիսի տարածաշրջանի ավտոճանապարհները բաց են, անցանելի, համապատասխան մաքրման, ձյունից ազատված շերտի լայնացման աշխատանքներ են կատարվել եւ կատարվում: *«Ձյունը դեռեւս շարունակում է տեղալ, տեղ-տեղ առկա է մառախուղ, բայց տեսանելիությունը նորմալ է»*, – նշեց նա:

«Ընդհանուր առմամբ տեղացել է մոտ 40-50 սմ ձյուն: Կապանի տարածաշրջանի բոլոր ավտոճանապարհները բաց են, կատարվում են լայնացման, մաքրման աշխատանքներ: Համապատասխան տեխնիկա եւ նյութեր ունենք ճանապարհներն անցանելի դարձնելու համար: Այս պահին մառախլապատ տարածք չկա», – տեղեկացրեց «Կապանի ՃՇՇ» ընկերության տնօրեն Արարատ Կարապետյանը:

Իսկ համայնքային ենթակայության ճանապարհների, մայթերի մաքրման աշխատանքների համար պատասխանատու են համայնքապետարանները, դրանց ընդհանուր վիճակը, կարծում ենք, տեսանելի է բոլորին…

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Վարդանիձորի միջնակարգ դպրոցի ՆԶՊ-ի (զինղեկի, 0.5 դրույք) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2017թ. հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2017թ. հունվարի 27-ին՝ ժամը 14:00-ին, Վարդանիձորի միջն. դպրոցում:

Հասցեն՝ գ. Վարդանիձոր:

Տեղեկությունների համար զանգահարել 098-711-985 հեռախոսահամարով:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է:
Զանգահարել՝ (094) 95 55 35:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 19.12.2016թ.: